

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ**

Հունան Տեր-Վարդանյան

ՄԻԵԴ

**ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՅՈՒԹ**

ԵՐԵՎԱՆ 2015

Բովանդակություն

ԴԱՍ 1

Թեմա 1. Արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը (մեկնաբանման առանձնահատկություններ).....

Թեմա 2. ՄԻԵԿ 6-րդ հոդվածի կիրառման ոլորտը քաղաքացիական դատավարությունում («քաղաքացիական իրավունք և պարտականություն» հասկացությունը, դրա ինքնավար բնույթը).....

ԴԱՍ 2

Թեմա. Դատարանի իրավունք.....

ԴԱՍ 3

Թեմա 1. Օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալ.....

Թեմա 2. Անկողմնակալ տրիբունալ.....

ԴԱՍ 4

Թեմա 1. ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարույթային տարրերը: Արդարացի լուծման (ընդհանուր սկզբունքները), մրցակցության սկզբունք.....

Թեմա 2. «Զենքերի հավասարություն».....

ԴԱՍ 5

Թեմա 1. ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարույթային տարրերը (շարունակություն): Հրապարակային քննություն.....

Թեմա 2. Վարույթի տևողությունը (ողջամիտ ժամկետի սկզբունք).....

Գրականություն.....

ԴԱՍ 1

Թեմա 1. Արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը (մեկնաբանման առանձնահատկություններ)

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիա) 6–րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը: Այն իր մեջ ներառում է ժողովրդավարական հասարակության կառուցման համար անհրաժեշտ օրենքի գերակայության սկզբունքը, ինչպես նաև, որպես պայմանավորվող պետությունների ընդհանուր պատմական ժառանգություն՝ արդարադատության իրականացման գործում դատական համակարգի բարձր դերը: Կոնվենցիայի 6–րդ հոդվածը երաշխավորում է քաղաքացիական դատավարությունում կողմերի իրավունքներ (Հոդված 6, § 1), ինչպես նաև ամբաստանյալի (մեղադրյալի, կասկածյալի) իրավունքներ՝ քրեական վարույթում (Հոդված 6, § 1, 2 և 3)¹: Եվ չնայած վարույթների այլ մասնակիցներ (տուժողներ, վկաներ և այլն) չունեն 6–րդ հոդվածի հիմքով գանգատ ներկայացնելու իրավական հնարավորություն (Mihova v. Italy, որոշում, 30/03/2010 թ., գանգատ թիվ 25000/07), Եվրոպական դատարանը հաճախ հաշվի է առնում նաև վերջիններիս իրավունքները:

Ինչպես Կոնվենցիայի մյուս հոդվածների դեպքում, 6–րդ հոդվածը նույնպես ենթարկվել է «նպատակաուղղված» մեկնաբանման: Եվրոպական դատարանը մշտապես աշխատում է 6–րդ հոդվածին հաղորդել կիրառելի բնույթ՝ առաջնահերթ պաշտպանելու համար այն իրավունքները, որոնք պրակտիկ և արդյունավետ են (արդյունավետության

¹ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ քաղաքացիական դատավարության ոլորտի նախադեպերը գլխավորապես ձևավորվել են Կոնվենցիայի 6–րդ հոդվածի մեկնաբանություններում: Հոդվածը վերնագրված է «Արդար դատաքննության իրավունք» և բաղկացած է երեք մասից: Հոդվածի առաջին մասը, որն ավելի ընդհանուր բնույթի է, վերաբերում է քաղաքացիադատավարական, վարչադատավարական և քրեադատավարական ոլորտներին: Հոդվածի երկրորդ և երրորդ մասերը վերաբերում են միայն քրեադատավարական ոլորտին, ինչի պատճառով սույն ձեռնարկում քննարկման առարկա չեն դարձվի. փոխարենն ավելի խոր անդրադարձ կկատարվի 6–րդ հոդվածի առաջին մասի քաղաքացիադատավարական մասին:

սկզբունք), քան թե այն իրավունքները, որոնք տեսական և վերացական են (Sakhnovskiy v. Russia, 02/11/2010 թ. Մեծ պալատի վճիռ, գանձատ թիվ 21272/03, կետ 99–107): Որպես նման ոչ տառացի, բովանդակային (ենթատեքստային) մեկնաբանության արդյունք՝ դատարանի մատչելիության իրավունքը (Golder v. The United Kingdom, 21/02/1975 թ. վճիռ, գանձատ թիվ 4451/70, կետ 26–40), դատական ակտերի կատարման իրավունքը (Hornsby v. Greece, 19/03/1997 թ. վճիռ, գանձատ թիվ 18357/91, կետ 40–45), դատական ակտի անփոփոխելիության իրավունքը (Brumarescu v. Romania, 28/10/1999 թ. Մեծ պալատի վճիռ, գանձատ թիվ 28342/95, կետ 60–65), ի թիվս այլ պահանջների, մեկնաբանվել են ոչ թե տվյալ դրույթի տառացի իմաստով, այլ հիմք ընդունելով Կոնվենցիայի ընդհանուր բովանդակությունը:

Եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի շարադրանքից, ինչպես նաև դրանում ամրագրված նորմերին Եվրոպական դատարանի տված մեկնաբանություններից կարելի է վեր հանել արդար դատաքննության իրավունքի հետևյալ կառուցվածքային տարրերը՝

1. դատարանի իրավունք, որի ենթադրորեն են՝

ա. դատարանի մատչելիության իրավունքը,

բ. օրինական ուժ ստացած դատական ակտերի վերջնական լինելու իրավունքը,

գ. վերջնական դատական ակտերի ժամանակին կատարման իրավունքը:

2. Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ տրիբունալի իրավունք, որի ենթադրորեն են՝

ա. օրենքի հիման վրա ստեղծված տրիբունալի իրավունքը,

բ. անկախ տրիբունալի իրավունքը,

գ. անկողմնակալ տրիբունալի իրավունքը:

3. Գործի արդարացի քննության իրավունք, որի ենթադրորեն են՝

ա. մրցակցության իրավունքը,

բ. զենքերի հավասարության իրավունքը,

գ. ներկայության իրավունքը,

դ. հրապարակայնության իրավունքը²:

Չնայած որ, ըստ Եվրոպական դատարանի, Կոնվենցիան պետք է մեկնաբանվի միջազգային իրավունքի այլ նորմերին հնարավորինս համահունչ՝ ներառյալ պատասխանող պետության այլ միջազգային պարտավորությունները, այնուամենայնիվ, չի կարելի բացառել, որ Կոնվենցիայի պահանջները կարող են գերակայել դրանց նկատմամբ (*Fogarty v. the United Kingdom*, 21/11/2001 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 37112/97, կետ 32–39, տես նաև *Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Sirketi v. Ireland*, 30/06/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 45036/98, կետ 108–111, ինչպես նաև այլ գործեր, որոնք Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեսանկյունից վիճարկում են Եվրամիության օրենսդրության առանձին դրույթներ):

Եվրոպական դատարանի ձևավորած մոտեցմամբ Կոնվենցիայի 6–րդ հոդվածը պետք է մեկնաբանել՝ տվյալ օրվա պահանջներից ելնելով՝ հաշվի առնելով գերակա տնտեսական և սոցիալական պայմանները: Նշված մոտեցումը նաև անվանվում է «Կոնվենցիան որպես կենդանի օրգանիզմ» սկզբունք (*Marckx v. Belgium*, 13/06/1979 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 6833/74, կետ 41): Կոնվենցիան մեկնաբանելիս Եվրոպական դատարանը կարող է հաշվի առնել նաև պայմանավորվող պետությունների հարաբերություններում կիրառելի միջազգային իրավունքի համապատասխան նորմերն ու սկզբունքները (*Demir and Baykara v. Turkey*, 12/11/2008 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 34503/97, կետ 76–84):

Կոնվենցիայի 6–րդ հոդվածի և՛ նյութական, և՛ դատավարական դրույթները որոշակի ինքնավարություն ունեն պայմանավորվող պետությունների ներպետական օրենսդրություններում (*Khan v. The United Kingdom*, 12/05/2000 թ. վճիռ, գանգատ թիվ 35394/97, կետ 76–84): Սա նշանակում է, որ ներպետական օրենսդրության իմաստով դատավարական թերությունը պարտադիր չէ, որ հանգեցնի 6–րդ հոդվածի խախտման:

Այնուամենայնիվ, որոշ դեպքերում Եվրոպական դատարանը 6–րդ հոդվածի խախտումը հիմնավորելիս որպես լրացուցիչ փաստարկ է

² Նշված կառուցվածքի տրամաբանությամբ էլ կառուցված է սույն դասընթացը:

հիմք ընդունել ներպետական օրենքի խախտումը կամ ներպետական օրենքի դրույթի անորոշությունը (DMD Group, a.s. v. Slovakia, 05/10/2010 թ. վճիռ, գանգատ թիվ 19334/03, 62–72 կետ) : Երբեմն, 6–րդ հոդվածի վերաբերյալ սեփական դիրքորոշումը հիմնավորելու համար Եվրոպական դատարանը հղում է կատարել ներպետական դատական ակտերին, որոնք նույնպես փաստել են 6–րդ հոդվածի նույնական սահմանադրական դրույթի խախտում (Henryk Urban and Ryszard Urban v. Poland, 30/11/2010 թ. վճիռ, գանգատ թիվ 23614/08, կետ 47–56):

Կոնվենցիայի 6–րդ հոդվածի իմաստով ավելի էական է այն, թե արդյոք Եվրոպական դատարան դիմողն ունեցել է բավարար հնարավորություն՝ ներկայացնելու իր վեճը և վիճարկելու այն ապացույցները, որոնք նա համարել է կեղծ, այլ ոչ թե՝ արդյոք ներպետական դատարանները կայացրել են ճիշտ կամ սխալ որոշում, քանի որ ներպետական դատարանի գործն է գնահատել ապացույցը և կիրառել ներպետական օրենքը: Այս առումով Եվրոպական դատարանը նշել է. «Դատարանը կրկնում է, որ իր խնդիրը ազգային դատական մարմինների կողմից թույլ տված փաստի կամ իրավունքի սխալը վերանայելը չէ, և որ, որպես ընդհանուր կանոն, ազգային դատարանների գործառույթն է գնահատել ներկայացված ապացույցները և կիրառել ներպետական օրենքը: Եվրոպական դատարանի գործառույթն է ճշտել՝ արդյոք վարույթը, որպես մեկ ամբողջություն վերցված, արդար է եղել (Karalevicius v. Lithuania, որոշում (վերջնական), 06/06/2002 թ., գանգատ թիվ 53254/99)»:

Ավելին, սուբսիդիարության (Կոնվենցիան որպես լրացուցիչ իրավական փաստաթուղթ հանդիսանալու) սկզբունքին համապատասխան՝ 6–րդ հոդվածը հնարավորություն չի տալիս Եվրոպական դատարանին գործելու որպես չորրորդ ատյանի դատարան, այն է՝ վերահաստատել գործի փաստերը կամ վերաքննել ազգային օրենքի ենթադրյալ խախտումները (Bernard v. France, 23/04/1998 թ. վճիռ, գանգատ թիվ 22885/93, կետ 37–41) կամ էլ որոշում կայացնել ապացույցների թույլատրելիության վերաբերյալ (Schenk v. Switzerland, 12/07/1988 թ. վճիռ, գանգատ թիվ 10862/84, կետ 45–49):

Սակայն, նշված ընդհանուր մոտեցումից Եվրոպական դատարանը մի շարք գործերով կատարել է որոշակի վերապահումներ: Այսպես,

վերջին տարիներին Եվրոպական դատարանը նույն վերաքննիչ դատարանում նույն հարցի վերաբերյալ իրարամերժ կայուն դատական ակտերի պրակտիկայի պատճառով երբեմն 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել (*Tudor Tudor v. Romania*, 24/03/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 21911/03, կետ 26–33)³ շեշտելով, որ խնդրո առարկա անհամապատասխանության «խոր և երկարատև» բնույթը լայն առումով իրավական որոշակիության սկզբունքի հետ անհամատեղելի է: Միննույն ժամանակ, Մեծ պալատը վերջերս շեշտեց, որ 6-րդ հոդվածով Եվրոպական դատարանի գործառույթը չէ համեմատել ազգային դատարանների տարբեր որոշումներ, անգամ եթե դրանք կայացվել են առերևույթ նմանատիպ ընթացակարգերում՝ բացառությամբ ակնհայտ կամայականության դեպքերի (*Nejdet Şahin and Perihan Şahin v. Turkey*, 20/10/2011 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 13279/05, կետ 59–96):

Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման հարցը պարզելիս վարույթի «արդարացիությունը», որպես կանոն, գնահատում է ոչ թե առանձին վերցրած վարույթային թերություն փաստելով, այլ վարույթը դիտարկում է որպես մեկ ամբողջություն՝ հաշվի առնելով վարույթի բոլոր փուլերն ու հնարավորությունները: Անձը, որպես կանոն, կարող է 6-րդ հոդվածի խախտման «զոհի» կարգավիճակ հայցել միայն, եթե վարույթն ավարտված է. քաղաքացիական գործերով ներկայացված հայցով վեճը (առնվազն մի մասով) վերջնական լուծվել է: Չնայած կան որոշակի բացառություններ. օրինակ՝ «դատարանի մատչելիության» կամ «ողջամիտ ժամկետի» պահանջների խախտումներ կարող են փաստվել նաև առանց վերջնական դատական ակտի:

Չնայած Եվրոպական դատարանը հազվադեպ է նշել, որ 6-րդ հոդվածով ամրագրված իրավունքները հարաբերական իրավունքներ են³,

³ qualified rights. Համաձայն մարդու իրավունքների դասակարգումներից մեկի՝ մարդու իրավունքները, ըստ բնույթի, բաժանվում են երեք խմբի՝ բացարձակ իրավունքներ (*absolute rights*). չեն կարող սահմանափակվել ոչ մի պարագայում, օրինակ՝ խոշտանգումներից պաշտպանված լինելու իրավունքը), սահմանափակ իրավունքներ (*limited rights*). իրավունքներ են, որոնք իրենց բնույթով ունեն սահմանափակումներ, օրինակ՝ ազատության իրավունքը, որը կարող է սահմանափակվել օրինական ձերբակալմամբ) և հարաբերական իրավունքներ (*qualified rights*. իրավունքներ են, որոնք պահանջում են հավասարակշռություն մի կողմից՝ անհատի իրավունքների, մյուս կողմից՝ հասարակության և

սակայն Կոնվենցիայի նախադեպային իրավունքի ավելի համապարփակ ուսումնասիրությունը վկայում է, որ 6-րդ հոդվածի որոշ դրույթներ, ինչպես, օրինակ, դատարանի մատչելիության իրավունքն է (*Ashingdane v. the United Kingdom*, 28/05/1985 թ. վճիռ, գանգատ թիվ 8225/78, կետ 55-60), շատ մոտ են հարաբերական իրավունքներ որակվելուն: Եվրոպական դատարանը, հղկելով հարաբերական իրավունքի գաղափարը, նշել է, որ այն, թե ինչ է արդար դատաքննությունը, չի կարող որոշվել մեկ անփոփոխելի սկզբունքով, այլ պետք է պայմանավորված լինի կոնկրետ գործի հանգամանքներով: Որպես արդյունք, *sui generis*⁴ համաչափության թեստը կիրառվել է բազմաթիվ դեպքերում (հաճախ կոչվում է նաև «իրավունքի բուն էության» թեստ)։ օրինակ, երբ կողմերի հավասարության իրավունքի պաշտպանության ավելի ցածր աստիճան սահմանվեց քաղաքացիական գործերով՝ ի համեմատություն քրեական գործերի (*Foucher v. France*, 18/03/1997 թ. վճիռ, գանգատ թիվ 22209/93, կետ 29-38, ի տարբերություն՝ *Menet v. France*, 14/06/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 39553/02, կետ 43-53):

Եվրոպական դատարանի ընդհանուր մոտեցման համաձայն՝ պայմանավորվող պետությունները Կոնվենցիայի առաջին հոդվածի ուժով պարտավոր են կազմակերպել իրենց իրավական համակարգերն այնպես, որպեսզի ապահովեն համապատասխանությունը 6-րդ հոդվածի պահանջներին: Որպես կանոն՝ այդ պահանջների չափապանումը չի կարող արդարացվել ֆինանսական կամ պրակտիկ խնդիրներով (*Salesi v. Italy*, 26/02/1993 թ. վճիռ, գանգատ թիվ 13023/87, կետ 24):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շատ իրավունքներից կարելի է նաև հրաժարվել: Ամեն դեպքում, հրաժարումը (բացահայտ կամ ոչ բացա-

պետության շահերի միջև: Իրենց բնույթով սահմանափակումներ չունեն, սակայն որոշակի պայմաններում կարող են սահմանափակվել, եթե անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում: Միջամտությունը պետք է պայմանավորված լինի գերակշռող հասարակական անհրաժեշտությամբ, հետապնդի օրինական նպատակ և լինի համաչափ հետապնդած նպատակին. որպես օրինակ՝ խոսքի ազատության իրավունք):

⁴ Լատ. բառացի՝ ինքնատիպ, եզակի իր տեսակի մեջ: Լատիներեն արտահայտություն է. նշանակում է իրավական երևույթի (ակտ, օրենք, իրավիճակ) բացառիկություն, այսինքն՝ չնայած նման այլ երևույթների հետ նմանության, այն, ըստ էության, նախադեպ չունեցող է: «*Sui generis*» յուրաքանչյուր դեպքի բացառիկությունը հաճախ դառնում է երկարատև վեճերի առարկա նախադեպի կիրառման հարցը պարզելիս:

հայտ) Եվրոպական դատարանը կարող է ընդունել միայն, եթե հրաժարումը իրական է, այն է՝

- Հրաժարումը տեղի է ունեցել հստակորեն և աներկբայորեն (չպետք է կասկածներ լինեն դրա գոյության և շրջանակների մասին):

- Հրաժարումը տեղի է ունեցել ազատորեն (անձը չպետք է պարտադրված լինի հրաժարվել իր իրավունքից, *Deweere v. Belgium*, 27/02/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6903/75, կետ 48–54):

- Հրաժարումը տեղի է ունեցել գիտակցված (անձը պետք է հասկանա հրաժարման հետևանքները):

Հրաժարումը չի հակադրվում կարևոր հանրային շահի (*Sejdovic v. Italy*, 01/03/2006 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 56581/00, կետ 96–104; *Talat Tunc v. Turkey*, 27/03/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 32432/96, կետ 55–64):

Իրավունքից հրաժարում կարող է արձանագրվել նաև, եթե անձը ձախողում է իրավունքի իրացումը կամ իրավունք է պահանջում ուշացումով (*Bracci v. Italy*, 13/10/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 36822/02, կետ 62–65):

Թեմա 2. ՄԻԵԿ 6–րդ հոդվածի կիրառման ոլորտը քաղաքացիական դատավարությունում («քաղաքացիական իրավունք և պարտականություն» հասկացությունը, դրա ինքնավար բնույթը)

Համաձայն 6–րդ հոդվածի դրույթների ինքնավար մեկնաբանության կանոնի՝ Եվրոպական դատարանը որոշում է կոնկրետ դեպքով 6–րդ հոդվածի կիրառելիության հարցը «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» առկայություն փաստելու դեպքում:

Կոնվենցիայի 6–րդ հոդվածի կիրառելիությունը «քաղաքացիական» մասով ենթադրում է ներքոշարադրյալ տարրերի միաժամանակյա առկայություն.

- Պետք է լինի «վեճ» «իրավունքի» կամ «պարտականության» վերաբերյալ (*Bentham v. the Netherlands*, 23/10/1985 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 8848/80, կետ 32–36):

- Տվյալ իրավունքը կամ պարտականությունը պետք է ներպետական

օրենսդրությունում որոշակի հիմք ունենա (Roche v the United Kingdom, 19/05/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 32555/96, կետ 116–126):

- Իրավունքը կամ պարտականությունը պետք է լինի քաղաքացիական բնույթի (Ringelsen v. Austria, 23/06/1973 թ. վճիռ, գանգատ թիվ 2614/65, կետ 94):

Ներպետական օրենքի վրա հիմնված իրավունքի վերաբերյալ վեճ.

Այսպես կոչված Բենթեմի չափանիշի համաձայն՝ 6–րդ հոդվածը պետք է ներառի «վեճ» իրավունքի կամ պարտականության վերաբերյալ, որը՝

- պետք է ունենա նյութական, այլ ոչ թե ձևական բնույթ,
- կարող է վերաբերել ոչ միայն իրավունքի իրական գոյությանը, այլ նաև իրավունքի շրջանակին և ձևին, որով տվյալ իրավունքը կարող է իրականացվել,
- կարող է վերաբերել փաստի կամ իրավունքի հարցերին,
- պետք է լինի իրական և էական,
- պետք է որոշիչ լինի դիմողի իրավունքների համար և չունենա ոչ էական կապ կամ հեռավոր հետևանքներ (Benthem v. the Netherlands, 23/10/1985 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 8848/80, կետ 32–36):

Ներպետական օրենսդրության մեջ «հիմք» ունեցող «վեճ» հասկացությունը ենթադրում է առնվազն ներպետական օրենսդրությամբ, թեկուզև վիճելի հիմքեր ունեցող հայց ներկայացնելու հնարավորություն (Georgiadis v. Greece, 29/05/1997 թ. վճիռ, գանգատ թիվ 21522/93, կետ 27–36): Այս առումով Եվրոպական դատարանը նշել է. «Դատարանը կրկնում է, որ *քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ* հասկացությունը չպետք է մեկնաբանվի՝ բացառապես պատասխանող պետության ներպետական օրենսդրությանը հղում կատարելով, և որ 6–րդ հոդվածի առաջին պարագրաֆը կիրառվում է անկախ կողմերի կարգավիճակից, անկախ տվյալ հարցի կարգավորումը սահմանող

օրենսդրությունից, ինչպես նաև անկախ վեճի լուծման իրավասություն ստացած մարմնի բնույթից» (Georgiadis v. Greece, 29/05/1997 թ. վճիռ, գանգատ թիվ 21522/93, կետ 34): Դատարանը նաև նշել է, որ չնայած ներպետական օրենքով կալանավորմանը հետևած արդարացումը վերաբերում է հանրային–իրավական հարցերի, այդ դրույթով նախատեսված փոխհատուցման իրավունքն իր բուն էությամբ քաղաքացիական բնույթի է («de caractere civil») (Georgiadis v. Greece, 29/05/1997 թ. վճիռ, գանգատ թիվ 21522/93, կետ 35):

«Հիմքի» առկայությունը փաստելու համար, ըստ Եվրոպական դատարանի, բավարար չէ, որպեսզի իրավունքը գոյություն ունենա *in abstracto*: Գանգատ ներկայացնողը պետք է ցույց տա որոշակի կապ ներպետական վարույթում ներկայացրած պահանջի հետ:

Այս առումով էական նշանակություն չունի օրենսդրությունը, որով հարցը պետք է որոշվի (քաղաքացիական, տնտեսական, վարչական իրավունք կամ այլ), կամ այն մարմինը, որն ունի հարցը լուծելու իրավասություն (դատարան, տրիբունալ, տեղական իշխանություն, մասնագիտական կազմակերպություն և այլն): Քանի դեռ տվյալ մարմինն ունի «վեճը» լուծելու իրավասություն, 6–րդ հոդվածը կիրառելի կլինի (Ringisen v. Austria, 16/07/1971 թ. վճիռ, գանգատ թիվ 2614/65, կետ 94):

Ներպետական օրենսդրության մեջ ավելի հավանական է, որ «հիմքի» առկայություն փաստվի այնտեղ, որտեղ օրենքը որևէ կոնկրետ իրավունք հայցելու համար սահմանում է վարույթային խոչընդոտ, այլ ոչ թե նյութական արգելք (Roche v the United Kingdom, 19/05/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 32555/96, կետ 116–126): Այս առումով Եվրոպական դատարանը նշել է. «6–րդ հոդվածի առաջին պարագրաֆը, այնուամենայնիվ, չի երաշխավորում պայմանավորվող պետության նյութական իրավունքում (քաղաքացիական) «իրավունքների» որևէ հատուկ բովանդակություն: Եվրոպական դատարանը 6–րդ հոդվածի առաջին պարագրաֆի մեկնաբանման միջոցով չի կարող ստեղծել նյութական իրավունք, որը կոնկրետ պետությունում իրավական հիմք չունի: Վերջինիս երաշխիքները տարածվում են միայն այն իրավունքների նկատմամբ, որոնք, թեկուզև վիճելի հիմքերով, ճանաչված են ներպետական օրենքով (Roche v the United Kingdom, 19/05/2005 թ. Մեծ պա-

լատի վճիռ, գանգատ թիվ 32555/96, կետ 117):

Օրենքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի կլինի այն իրավիճակը, երբ ներպետական դատարանների ենթակայությունից դուրս հանվի քաղաքացիական հայցերի լայն շրջանակ, կամ քաղաքացիաիրավական պատասխանատվությունից անձեռնմխելիություն շնորհվի անձանց լայն շրջանակի: Այդ իսկ պատճառով նման սահմանափակումները պետք է դիտարկվեն պարզապես որպես վարույթային խոչընդոտ (*Osman v. the United Kingdom*, 28/10/1998 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 23452/94, կետ 136–140):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը էական հիմնավորումներ կպահանջի ներպետական դատարանների դիրքորոշումից հեռանալու համար այն դեպքերում, երբ ներպետական դատարանները պահանջ ներկայացնելու համար նյութաիրավական խոչընդոտ կգտնեն (իսկ բարձր ատյանների ներպետական դատարաններն էլ վերանայած կլինեն հարցը՝ հաշվի առնելով կոնվենցիոն սկզբունքները): Այսպիսով՝ կիրառելիության հարցում 6–րդ հոդվածն ունի որոշակի (բայց ոչ ամբողջական) ինքնավարություն ազգային օրենսդրությունից (*Osman v. the United Kingdom*, 28/10/1998 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 23452/94, *Roche v the United Kingdom*, 19/05/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 32555/96, կետ 120):

Քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ

«Քաղաքացիական իրավունքներ և ազատություններ» հասկացությունն ինքնուրույն է ներպետական օրենքի սահմանումներից (*Ringeisen v. Austria*, 16/07/1971 թ., գանգատ թիվ 2614/65):

Կոնվենցիայի 6–րդ հոդվածը կիրառվում է անկախ կողմերի կարգավիճակից և կիրառելի օրենսդրությունից: Էական է խնդրի առարկա իրավունքի բնույթը և այն, թե արդյոք վարույթի ելքն ուղղակի ազդեցություն է գործելու մասնավոր բնույթի իրավունքների և պարտականությունների վրա (*Baraona v. Portugal*, 08/07/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 10092/82, կետ 38–44):

Կոնվենցիայի 6–րդ հոդվածի կիրառելիության հարցը քննարկելիս

Եվրոպական դատարանը նշել է, որ իրավունքի տնտեսական բնույթը կարևոր, բայց էական չափանիշ չէ 6-րդ հոդվածի կիրառելիությունը որոշելու համար: Հայցն իր բնույթով պետք է լինի առնվազն գույքային բնույթի և հիմնված լինի (ենթադրաբար) խախտված իրավունքների վրա, որոնք նույնպես գույքային բնույթի իրավունքներ են (Procola v. Luxembourg, 28/09/1995 թ. վճիռ, գանգատ թիվ 14570/89, կետ 37–40): Դրամային հայցը դիմողի այլ պահանջների շարքում պարտադիր չէ, որ վեճը դարձնի «քաղաքացիական» (Panjeheighalehei v. Denmark, որոշում, 13/10/2009 թ., գանգատ թիվ 11230/07):

Եվրոպական դատարանը նաև նշել է, որ մասնավոր-իրավական տարրերը պետք է գերակշռող լինեն հանրային-իրավական տարրերի նկատմամբ, որպեսզի հայցը որակվի որպես «քաղաքացիական» (Deumeland v. Germany, 29/05/1986 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 9384/81, կետ 59–74): Միևնույն ժամանակ գոյություն չունի «քաղաքացիական վեճ» հասկացության մշակված համընդհանուր բնորոշում՝ ի տարբերություն «քրեական իրավախախտում» հասկացության բնորոշման չափանիշների (Engel and others v. The Netherlands, 08/06/1976 թ. վճիռ, գանգատ թիվ 5100/71, 5101/71, 5102/71, 5354/72, 5370/72):

Երկար տարիներ պետական ծառայության անցնելու հայցերը, ոչ օրինական ազատումները, իրենց գործառույթները որպես պետական իշխանության կրողներ իրականացնող հանրային ծառայողների վերականգնումը դիտարկվում էին 6-րդ հոդվածի շրջանակներից դուրս (Pellegrin v. France, 08/12/1999 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28541/95, կետ 64–71): Այնուամենայնիվ, *Վիլհո Էսկելինենի* գործով վճռից հետո (Vilho Eskelinen and others v. Finland, 19/04/2007 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 63235/00, կետ 50–64) Եվրոպական դատարանը կիրառելիության որոշակի կանխավարկած է հաղորդել 6-րդ հոդվածին՝ որպես «քաղաքացիական» դիտարկելով այն գործերը, որտեղ վեճը վերաբերում է սովորական աշխատանքային հարցերի (աշխատավարձ, նպաստ և այլն), և ազգային օրենսդրությունը նման վեճերի համար դատարան դիմելու հնարավորություն է տալիս, անգամ եթե միակ հասանելի հնարավորությունը Սահմանադրական դատարանն է (Olujic v. Croatia, 05/02/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 22330/05, կետ 31–43):

ԴԱՍ 2

Թեմա. Դատարանի իրավունք

Կոնվենցիայի 6–րդ հոդվածին կիրառական բնույթ հաղորդելու և պրակտիկ ու արդյունավետ (այլ ոչ՝ տեսական և վերացական) իրավունքներ պաշտպանելու համար Եվրոպական դատարանի կողմից մշակվել են դատարանի իրավունքի հետևյալ կառուցվածքային տարրերը՝

1. դատարանի մատչելիության իրավունք,
2. օրինական ուժ ստացած դատական ակտերի վերջնական լինելը,
3. վերջնական դատական ակտերի ժամանակին կատարումը:

Դատարանի իրավունքը հարաբերական իրավունք է (*Ashingdane v. the United Kingdom*, 28/05/1985 թ. վճիռ, գանգատ թիվ 8225/78) և հաճախ տարբեր բնույթ է ստանում քրեական և քաղաքացիական ոլորտներում:

1. Դատարանի մատչելիության իրավունք

Դատարանի մատչելիության իրավունքն առնչվում է հետևյալ 4 հիմնական խնդրահարույց ոլորտներին.

- անձի՝ քաղաքացիական հայց ներկայացնելու (*Golder v. The United Kingdom*, 21/02/1975 թ. վճիռ, գանգատ թիվ 4451/70) կամ դատական ակտ ստանալու (*Ganci v. Italy*, 30/10/2003 թ. վճիռ, գանգատ թիվ 41576/98) հնարավորության բացակայություն,
- մատչելիության վարույթային խոչընդոտներ, ինչպես, օրինակ, ժամկետային սահմանափակումներն են (*Hadjianastassiou v. Greece*, 16/12/1992 թ. վճիռ, գանգատ թիվ 12945/87, կետ 22–28) և դատարան դիմելու համար պետական տուրքը (*Kreuz v. Poland*, 19/06/2001 թ. վճիռ, գանգատ թիվ 28249/95, կետ 52–67):
- մատչելիության պրակտիկ խոչընդոտներ, ինչպիսին, օրինակ, իրավական օգնության բացակայությունն է (*Airey v. Ireland*, 09/10/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6289/73, կետ 22–28):
- քաղաքացիական գործով պատասխանողի դատավարական անձեռնմխելիությունը (*Osman v. the United Kingdom*, 28/10/1998 թ.

Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 23452/94):

Վարույթ սկսելու, վնասների փոխհատուցում պահանջելու և դատական ակտ ստանալու հնարավորություն

Նշվածը պարտադիր ակտ կայացնելու նպատակով վճիռ հետ կապված փաստի և իրավունքի հարցեր քննելու իրավասություն ունեցող տրիբունալին պահանջ ներկայացնելու իրավունք է (Le Compte, Van Leuven and De Meyere v. Belgium, 23/06/1981 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 6878/75, 7238/75, կետ 54–61): Միևնույն ժամանակ 6–րդ հոդվածը չի ստեղծում նյութական իրավունքներ (օրինակ՝ ստանալ վնասների փոխհատուցում): Դատարան ներկայացված պահանջը պետք է ներպետական օրենսդրությունում հիմքեր ունենա, և անձը պետք է անձնական շահ ունենա վարույթի վերջնական արդյունքում, այսինքն՝ գործը չպետք է ձևական լինի:

Դատարանի մատչելիության իրավունքը բխում է միջազգային իրավունքի սկզբունքից, որն արգելում է արդարադատության իրականացումից հրաժարումը (Golder v. The United Kingdom, 21/02/1975 թ. վճիռ, գանգատ թիվ 4451/70) և վերաբերում է ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական վարույթներին (Deweere v. Belgium, 27/02/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6903/75, կետ 48–54):

Գոյություն ունի որոշակի համադրություն այս իրավունքի և «օրենքի վրա հիմնված դատարանի» իրավունքի միջև այնքանով, որքանով երկուսն էլ պահանջում են հնարավորություն՝ դիմելու դատական մարմնի, որն ընդունակ է ոչ միայն խորհրդատվական բնույթի եզրակացություններ, այլ նաև պարտադիր որոշումներ կայացնելու (Bentham v. the Netherlands, 23/10/1985 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 8848/80, կետ 40–43):

Բոլոր այն դեպքերում, երբ վարչական մարմինը «քաղաքացիական» իրավունքներին առնչվող որոշում է կայացնում, պետք է ներպետական օրենսդրությամբ առկա լինի դատական մարմնի դիմելու իրավունք: Առնվազն մեկ աստիճան վերանայելու իրավունքը 6–րդ հոդվածի ինքնավար պահանջ է (Albert and Le Compte v. Belgium, 10/02/1983 թ. վճիռ,

զանգատ թիվ 7299/75, 7496/76, կետ 25–37):

Միևնույն ժամանակ 6–րդ հոդվածը ստորին ատյանի դատարանի որոշումը ավելի բարձր ատյան բողոքարկելու իրավունք ինքնին չի տրամադրում: Միայն այն դեպքերում, երբ ներպետական օրենքը նախատեսում է նման իրավունք, 6–րդ հոդվածը կկիրառվի ավելի բարձր ատյաններում: Երկու և ավելի ատյանի վերանայմանը դիմելու իրավունքը, այսպիսով, 6–րդ հոդվածի ոչ ինքնուրույն պահանջ է (*Delcourt v. Belgium*, 17/01/1970 թ. վճիռ, գանգատ թիվ 2689/65): Մասնավորապես, *Gorou v. Greece* (2006) գործի փաստերի համաձայն՝ դատախազը հրաժարվել էր ներկայացնել վերաքննիչ բողոք: Հունաստանի օրենսդրությունը դիմումատուին վերաքննության ուղղակի հնարավորություն չէր տալիս՝ դա թողնելով դատախազի հայեցողությանը: Նշված գործով Մեծ պալատը դատախազի հրաժարումը քննարկել է 6–րդ հոդվածի շրջանակներում (*Gorou v. Greece*, 20/03/2006 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 12686/03, կետ 27–36):

Պատճառաբանված որոշման իրավունքը չնայած ժամանակին դիտարկվում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վարույթի «արդարության» տեսանկյունից, կառուցվածքային առումով դատարանի իրավունքի գաղափարի մաս է, քանի որ այն նույն կերպ պահանջում է կոնկրետ գործով դիմումատուի բարձրացրած համապատասխան փաստական և իրավական հարցերի պատասխան (*Chevrol v. France*, 13/02/2003 թ. վճիռ, գանգատ թիվ 49636/99, կետ 76–84):

Գույքային և ոչ գույքային վնասի փոխհատուցում պահանջելու իրավունքը դիտվել է քաղաքացիական գործերով դատարանի մատչելիության իրավունքի բաղկացուցիչ մաս ինչպես անհատների, այնպես էլ իրավաբանական անձանց համար (*Zivulinskas v. Lithuania*, որոշում, 12/12/2006 թ., գանգատ թիվ 34096/02): Այնուամենայնիվ, ներպետական դատարաններն են որոշում փոխհատուցումը, ինչպես նաև փոխհատուցման չափը: Կոնվենցիայի 6–րդ հոդվածը դիտարկում է միայն՝ արդյոք այդ հարցը լուծվել է կամայական կամ ամբողջապես անտրամաբանական եղանակով:

Դատարանի մատչելիության իրավունքը հարաբերական իրավունք է. պետություններն ազատ են ապագա դատավարության կողմերի վրա

դնել սահմանափակումներ, քանի դեռ տվյալ սահմանափակումները հետապնդում են օրինական նպատակ, համարժեք են և չունեն այնպիսի բնույթ, որ խախտեն իրավունքի բուն էությունը (*Ashingdane v. the United Kingdom*, 28/05/1985 թ. վճիռ, գանգատ թիվ 8225/78):

Հարց է առաջանում. արդյո՞ք 6–րդ հոդվածի իմաստով սահմանափակումները թույլատրելի որակելու համար դրանք պետք է նախատեսված լինեն օրենքով: ՄԻԵԴ դատական պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ օրենքով նախատեսված լինելու պահանջը պարտադիր է (*Kohlhofer and Minarik v. The Czech Republic*, 15/10/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 32921/03, 28464/04, 5344/05, կետ 91–102):

Ցանկացած օրենսդրական դրույթ, որը դատարան հայց ներկայացնելու հնարավորության սահմանափակման հայեցողություն է պարունակում, պետք է այդ հայեցողությունը դատական հսկողության առարկա դարձնի (10/07/1998 թ. վճիռ, գանգատ թիվ 20390/92, 21322/92, կետ 72–79):

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Կոնվենցիայի այլ հոդվածներում արդար դատաքննության իրավունքի տարրերի առկայության հանգամանքը: Այսպես, անգամ եթե 6–րդ հոդվածը խախտված կամ կիրառելի չէ, Կոնվենցիայի այլ դրույթներ կարող են ընձեռել դատարանի մատչելիության իրավունքին համանման իրավունքներ, ինչպես, օրինակ, հանցագործությունից տուժածներին ընձեռնված երաշխիքներն են՝ կյանքը պաշտպանելու պոզիտիվ պարտականության (*Osman v. the United Kingdom*, 28/10/1998 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 23452/94, կետ 115–122), մահը հետաքննելու պոզիտիվ պարտականության (*Paul and Audrey Edwards v. the United Kingdom*, 14/03/2002 թ. վճիռ, գանգատ թիվ 46477/99) տեսքով, ընտանեկան կյանքը և տունը պաշտպանելու (օրինակ՝ *Fadeyeva v. Russia*, 09/06/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 55723/00, կետ 116–134, տեղաբնակի՝ վտանգավոր շրջակա միջավայր տեղափոխելու ներպետական պաշտպանության միջոցների անբավարարության առումով) կամ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի երաշխիքի (որպես հետևանք դիմումատուի բնակավայրի շրջակայքի՝ ինքնաթիռների թռիչքների ավելացման օրենսդրությամբ անրագրված ընթացակարգ՝ դատական վերանայման սահմա-

նափակ շրջանակ) տեսքով (Hatton v. the United Kingdom, 08/07/2003 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 36022/97, կետ 116–130):

Սահմանափակ ժամկետներ, դատական տորթեր, դատական ենթակայություն և այլ ձևականություններ

Սկզբունքորեն, ըստ Եվրոպական դատարանի, կարելի է սահմանել վարույթային սահմանափակումներ և պահանջներ՝ ներպետական օրենքով արդարադատության պատշաճ իրականացման համար: Սակայն դրանք, այնուամենայնիվ, չպետք է խախտեն դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը (Hadjianastassiou v. Greece, 16/12/1992 թ. վճիռ, գանգատ թիվ 12945/87, կետ 32–37):

Դիմողը պետք է համապատասխան ջանք ցուցաբերի ներպետական օրենքով սահմանված պահանջներին համապատասխանելու համար, ինչպես, օրինակ, վերաքննության համար ժամկետների պահպանումն է (Jodko v. Lithuania, 07/09/1999 թ. որոշում, գանգատ թիվ 39350/98):

Եվրոպական դատարանի ներկա պրակտիկայի ուսումնասիրությունից հստակ չէ՝ արդյոք գոյություն ունի վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետների վերաբերյալ դատարանի որոշմամբ ծանուցվելու իրավունք: ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ նման իրավունք կարող է գոյություն ունենալ, եթե ներպետական իրավունքում առկա են մրցակցող երկու ժամկետներ (ինչպես, օրինակ, մեկը հենց բողոքի համար, և մյուսը՝ վերաքննիչ բողոքի լրացուցիչ հիմնավորումներ ներկայացնելու համար (Vacher v. France, 17/12/1996 թ. վճիռ, գանգատ թիվ 20368/92, կետ 22–31), կամ երբ նախկին փաստաբանը հրաժարվել էր ներկայացնել դիմողին վերաքննիչ վարույթում, և այդ փաստի հաշվառմամբ բողոքարկման ժամկետի հաշվարկը սկսվում է այն պահից, երբ անձը տեղեկացվել է փաստաբանի իր գործից հրաժարվելու մասին (Kulikowski v. Poland, 19/05/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 18353/03, կետ 60–71):

Ներպետական վարույթային կանոնները կարող են պահանջել, որպեսզի հայցը կամ վերաքննիչ բողոքը (ներառյալ փաստական և իրավական փաստարկները) կազմված լինի դիմումատուի կողմից որոշակի

ձևով: Այնուամենայնիվ, այդ պահանջը չպետք է հանգեցնի չափազանց ձևապաշտության: Ներպետական դատարաններից պահանջվում է որոշակի ի պաշտոնն քննություն՝ դիմողի փաստարկների հիման վրա *proprio motu*⁵ որոշում կայացնելու համար, անգամ եթե դրանք ձևակերպված չեն եղել բացարձակ հստակ կամ ճշգրիտ (*Dattel v. Luxembourg* (No. 2), 30/07/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 18522/06, կետ 36–47):

Քաղաքացիական դատավարության շարունակելիությունը կարող է պայմանավորված լինել հայցվորի կողմից որոշակի դատավարական պահանջներ կատարելով, ինչպես, օրինակ, անձնական ներկայությունն է: Այնուամենայնիվ, փաստաբանի ներկայության պայմաններում վերաքննիչ բողոքը քննելուց վերաքննիչ դատարանի հրաժարումը, երբ հայցվորը հիվանդության պատճառով մեկ օրով բացակայում է, դիտարկվել է որպես «առանձնահատուկ խիստ և ծանր պատիժ», որը հակասում է 6–րդ հոդվածի 1–ին պարագրաֆին (*Kari–Pekka Pietilainen v. Finland*, 22/09/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 13566/06, կետ 29–35):

Եվրոպական դատարանը դատարանի մատչելիության իրավունքի իրացման ենթատեքստում անդրադարձել է նաև դատական տուրքերի վճարման հարցին: Մասնավորապես, Դատարանն արձանագրել է, որ դատական տուրքեր վճարելու պահանջը քաղաքացիական գործերով համատեղելի է դատարանի մատչելիության իրավունքի հետ, քանի դեռ այն չի խախտում դրա բուն էությունը (*Kreuz v. Poland*, 19/06/2001 թ. վճիռ, գանգատ թիվ 28249/95):

Նշանակալի չափի դատական տուրքը, որը պահանջվում է վճարել նախօրոք քաղաքացիական հայցվորից, համատեղելի կլինի 6–րդ հոդվածի հետ, եթե պատասխանողը մասնավոր անձ է, և օրենքով կապ է ստեղծված պետական տուրքի և գույքային վնասի չափի միջև (*Jankauskas v. Lithuania*, որոշում, 16/12/2003 թ. վճիռ, գանգատ թիվ 59304/00): Սակայն տուրքի մեծ չափը կարող է խախտել Դատարանի մատչելիության իրավունքն այն դեպքում, երբ որպես կողմ հանդես են գալիս պետական մարմիններ (*Kreuz v. Poland*, 19/06/2001 թ. վճիռ, գանգատ թիվ 28249/95), կամ երբ ոչ նյութական վնասի հատուցման պահանջներով նախատեսվում է պետական տուրք վճարելու պարտավորություն

⁵ Լատ.՝ սեփական նախաձեռնությամբ

(Jankauskas v. Lithuania, որոշում, 16/12/2003 թ. վճիռ, գանգատ թիվ 59304/00):

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել, որ քաղաքացիական հայցվորից կամ պատասխանողից, ով պարտվում է գործը, կարող է պահանջվել, որպեսզի փոխհատուցի շահած կողմի ծախսերը: Սա չի հակասում 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆին՝ պայմանով, որ ներպետական դատարանները հաշվի են առել համապատասխան կողմի ֆինանսական դրությունը, և տրամադրված գումարի չափը ողջամիտ է (Collectif national d'information et d'opposition a' l'usine Melox-Collectif stop et Melox v. France, 12/06/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 75218/01, կետ 13-16):

Դատարանի մատչելիության իրավունքի շրջանակներում անդրադառնալով դատական ընդդատության հարցերին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ ներպետական դատարանները սկզբունքորեն ավելի լավ կարող են որոշել՝ արդյոք իրավասու են քննելու կոնկրետ գործը, թե ոչ: Դատարանի հրաժարումը ընդունել կոնկրետ վեճի վերաբերյալ հայցը իր տարածքային կամ առարկայական ընդդատությանը չպատկանելու պատճառով, չի խախտի դիմողի դատարանի իրավունքը: Այնուամենայնիվ, երբ մի դատարանը գործն ուղարկում է մեկ այլ դատարան, որն առերևույթ չունի իրավասություն, դատարանի մատչելիության իրավունքի խնդիր կարող է ծագել (Zylkov v. Russia, 21/06/2011 թ. վճիռ, գանգատ թիվ 5613/04, կետ 23-29):

Պրակտիկ խոչընդոտներ. իրավական օգնության բացակայություն

Ըստ Եվրոպական դատարանի՝ իրավական օգնության իրավունք քաղաքացիական գործերով, որպես այդպիսին, չկա: Քաղաքացիական գործերով իրավական օգնություն տրամադրելու ինքնուրույն պահանջ առաջանում է, երբ (Airey v. Ireland, 09/10/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6289/73, կետ 26)՝

– ներպետական օրենսդրությունը պարտադրում է դիմումատուին որոշակի (բարձր) ատյաններում (ինչպես, օրինակ, Վճռաբեկ դատարանն է) ներկայանալ փաստաբանի միջոցով,

– դա պայմանավորված է գործի կամ վարույթի բարդությամբ:

Դատարանին արդյունավետ հասանելիությունը կարող է հաջողությամբ իրագործվել անվճար իրավաբանական օգնությամբ, ինչպես նաև քաղաքացիական գործերով վարույթի պարզեցմամբ՝ անձնական ներկայացուցչության հնարավորություն ստեղծելով (*Airey v. Ireland*, 09/10/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6289/73, կետ 26):

Ի լրումն, այնտեղ, որտեղ պետությունը սեփական որոշմամբ ստեղծել է քաղաքացիական գործերով իրավական օգնության համակարգ, իրավական օգնության յուրաքանչյուր մերժում կդիտարկվի որպես դատարանի մատչելիության իրավունքի միջամտություն (ոչ ինքնավար պահանջ): Այնուամենայնիվ, տվյալ իրավունքի խախտում չի լինի, քանի դեռ պետությունն ունի արդյունավետ համակարգ պարզելու համար, թե որ գործերն է պետք որակել իրավական օգնության ենթակա, և որոնք՝ ոչ: Կոնվենցիան պետություններին տվել է բավականին լայն հայեցողություն՝ որոշելու համապատասխան դեպքերը (*Granger v. the United Kingdom*, 28/03/1990 թ. վճիռ, գանգատ թիվ 11932/86, կետ 43–48):

Բարձր դատական ատյանների առջև պարտադիր իրավական ներկայացուցչության համակարգը, որի պարագայում չներկայացված անձինք չեն կարող դիմել ավելի բարձր ատյան, որպես այդպիսին, չի հակասում 6–րդ հոդվածի 1–ին պարագրաֆին (*Webb v. the United Kingdom*, որոշում, 02/07/1997 թ., գանգատ թիվ 31006/96), սակայն նման կարգավորումը պետք է ուղեկցվի կամայականությունների դեմ դատավարական երաշխիքներով: Հետևաբար, այն դեպքում, երբ տրամադրված փաստաբանը հրաժարվում է բողոք ներկայացնել Վճռաբեկ դատարան այն պատճառաբանությամբ, որ հաջողության հավանականությունը փոքր է, փաստաբանի որոշումը պետք է գրավոր տեսք ունենա, որպեսզի վերջինիս որոշումը պատճառաբանվի (*Staroszczyk v Poland*, 22/03/2007 թ., գանգատ թիվ 59519/00, կետ 121–139):

Պատասխանողի դատավարական անձեռնմխելիությունը

Եվրոպական դատարանի իրավաբանության ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ քաղաքացիական հայցերից ներպետական

կամ օտարերկրյա որոշ մարմինների անձեռնմխելիության հարցում Եվրոպական դատարանի դիրքորոշումը հստակ չէ, քանի որ միանման գործերով Միացյալ Թագավորության դեմ ներկայացված հայցերով, որոշ դեպքերում արձանագրել է 6-րդ հոդվածի խախտում (Osman v. the United Kingdom, 28/10/1998 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 23452/94), որոշ դեպքերում խախտում չի արձանագրել (Z. And others v. The United Kingdom, 10/05/2001 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 29392/95), իսկ որոշ դեպքերում 6-րդ հոդվածն ընդհանրապես համարել է ոչ կիրառելի (Roche v the United Kingdom, 19/05/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 32555/96):

Ներպետական բարձրագույն ատյանի դատարաններն էական հայեցողություն ունեն որոշելու՝ արդյո՞ք նման հայցն ունի հիմք ներպետական օրենքում, և, հետևաբար, արդյո՞ք 6-րդ հոդվածը կարող է կիրառելի համարվել: Եվրոպական դատարանը պետք է էական պատճառներ ունենա վերջիններիս եզրահանգումները չընդունելու համար (Roche v the United Kingdom, 19/05/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 32555/96):

Այն դեպքում, երբ 6-րդ հոդվածը, ըստ Եվրոպական դատարանի, այնուամենայնիվ, կիրառելի է, պետք է տարբերակվի գործառությանն անձեռնմխելիությունը (այն է՝ որոշակի տեսակի հայցերից անձեռնմխելիություն, ինչպիսին է, օրինակ, ոստիկանությանը տրված անձեռնմխելիությունը՝ հաշվի առնելով հետաքննության գործառույթը (Osman v. the United Kingdom, 28/10/1998 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 23452/94) ավելի ընդհանուր՝ կառուցվածքային անձեռնմխելիությունից (ինչպես, օրինակ, օտարերկրյա դեսպանությանը (Fogarty v. the United Kingdom, 21/11/2001 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 37112/97) կամ այլ պետությանը տրված անձեռնմխելիությունը (Al-Adsani v. the United Kingdom, 21/11/2001 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 35763/97, կետ 52–67):

2. Դատական ակտի վերջնական լինելու իրավունք – *res judicata*⁶

Res judicata սկզբունքը նշանակում է, որ երբ քաղաքացիական գործով վճիռը կամ քրեական գործով արդարացման դատավճիռը ստանում է օրինական ուժ, պետք է անմիջապես դառնան պարտադիր, և չպետք է դրանց վերանայման որևէ ռիսկ լինի (*Brumarescu v. Romania*, 28/10/1999 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28342/95):

Այս իրավունքը ծագում է իրավական որոշակիության սկզբունքից (*Ryabykh v. Russia*, 24/07/2003 թ. վճիռ, գանգատ թիվ 52854/99, կետ 51–58): Այս դրույթի խախտման հիմնական օրինակ է արտակարգ կամ հատուկ բողոքների միջոցով տարբեր բարձրաստիճան պետական պաշտոնյաների միջամտությունը՝ նպատակ ունենալով վերանայել գործը օրենքով նախատեսված ժամկետի լրանալուց հետո (*Brumarescu v. Romania*, 28/10/1999 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28342/95, *Ryabykh v. Russia*, 24/07/2003 թ. վճիռ, գանգատ թիվ 52854/99):

Չնայած այն հանգամանքին, որ գործը կարող է վերաբացվել նոր երևան եկած հանգամանքների հիմքով, այնուամենայնիվ, ըստ Եվրոպական դատարանի՝ հետադարձ ուժ ստացած նոր օրենսդրությունը չի կարող նման «հանգամանք» դիտվել (*Maggio and others v. Italy*, 31/05/2011 թ. վճիռ, գանգատ թիվ 46286/09, 52851/08, 53727/08, 54486/08, 56001/08, կետ 44–50, *SCM Scanner de l'Ouest Lyonnais and others v. France*, 21/06/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 12106/03, կետ 29–34): Հետևաբար, օրենսդրության յուրաքանչյուր դրույթ սկզբունքորեն պետք է կիրառվի միայն ապագա հարաբերությունների նկատմամբ:

• *Վերջնական դատական ակտերի ժամանակին կատարում*

Այս իրավունքը բխում է արդարադատության արդյունավետության սկզբունքից և նպատակ ունի կանխելու դատական ակտի կատարման ձգձգումները (*Hornsby v. Greece*, 19/03/1997 թ. վճիռ, գանգատ թիվ 18357/91):

⁶ *Res judicata* (լատ.՝ լուծված գործ) հոռմեական իրավունքի դրույթ, համաձայն որի՝ իրավասու դատարանի վերջնական որոշումը, որն օրինական ուժ է ստացել, պարտադիր է կողմերի համար, և վերանայվել չի կարող:

Այս առումով Եվրոպական դատարանը նշել է. «Դատարանը կրկնում է, որ համաձայն իր հաստատված նախադեպային իրավունքի՝ 6-րդ հոդվածի առաջին պարագրաֆը յուրաքանչյուրին իրավունք է վերապահում իր քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին վերաբերող յուրաքանչյուր պահանջ ներկայացնել դատարանին կամ տրիբունալին՝ այսպիսով առարկայացնելով «դատարանի իրավունքը», որում մատչելիության իրավունքը (իրավունք քաղաքացիական հարցերով դատարանում վարույթ հարուցել) տվյալ իրավունքի մի տարրն է: Այնուամենայնիվ, նշված իրավունքը վերացական կլիներ, եթե պայմանավորվող պետությունների ներպետական իրավական համակարգը թույլ տար, որի վերջնական, պարտադիր դատական ակտը մնար չիրագործված՝ վնաս պատճառելով կողմերից մեկին: Մոտեցումը, համաձայն որի՝ 6-րդ հոդվածի առաջին պարագրաֆի պետք է մանրամասն ամրագրի կողմերին տրվող վարույթային երաշխիքները (արդար, հրապարակային և արագ քննություն)՝ առանց պաշտպանելու դատական որոշումների ի կատար ածումը և հետևաբար, 6-րդ հոդվածի առաջին պարագրաֆն այնպիսի մեկնաբանությունը, որ այն վերաբերում է միայն դատարանի մատչելիությանը և վարույթի իրականացմանը, ամենայն հավանականությամբ կհանգեցնեք օրենքի գերակայության (որը բոլոր պայմանավորվող պետությունները պարտավորվել են հարգել, երբ վավերացրել են Կոնվենցիան) հետ անհամատեղելի իրավիճակների: Հետևաբար, ցանկացած դատարանի կողմից կայացված վճռի կատարումը պետք է 6-րդ հոդվածի առաջին պարագրաֆի իմաստով դիտարկվի որպես «քննության» բաղադրամաս: Ավելին, Դատարանն արդեն իսկ ընդունել է տվյալ սկզբունքը վարույթի տևողությանը վերաբերող գործերով (Hornsby v. Greece 19/03/1997 թ. վճիռ, գանգատ թիվ 18357/91, կետ 40):

Զարգացնելով տվյալ մոտեցումը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ պետությունը չի կարող իր դեմ կայացված վճռից առաջացած պարտքը չմարելը պատճառաբանել միջոցների անբավարարությամբ (Burdov v. Russia (No.2), 15/01/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 33509/04, կետ 34–38): Այնուամենայնիվ, միջոցների անբավարարությունը կարող է արդարացնել մասնավոր անձի կամ ընկերության դեմ վերջնական

դատական ակտի չկատարումը (Bobrova v. Russia, 17/11/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 24654/03, կետ 16–17): Նման հորիզոնական վեճերում (որտեղ հակադիր կողմերը մասնավոր անձինք են) պետական մարմինների դերն իր օգտին կայացված դատական ակտի կատարմանը պահանջատիրոջը ողջամտորեն օժանդակելն է, սակայն չի երաշխավորում դրա կատարումը բոլոր դեպքերում (Fuklev v. Ukraine, 07/06/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 71186/01, կետ 84–86):

Այս երաշխիքն ինքնուրույն է ներպետական օրենքի պահանջներից: Դատական ակտի կատարման ներպետական ժամկետների խախտումը անհրաժեշտաբար չի նշանակում 6–րդ հոդվածի խախտում: Դատական ակտի կատարման ուշացումը կարող է ընդունելի լինել որոշակի ժամանակահատվածի համար՝ պայմանով, որ դա չի խախտում դատարանի իրավունքի բուն էությունը (Burdov v. Russia (No.2), 15/01/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 33509/04):

ԴԱՍ 3

Թեմա 1. Օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալ

Այս իրավունքը ներառում է դատական մարմնից պահանջվող երեք հիմնական չափանիշ, որոնցից որոշները երբեմն համադրվում են իրար: «Օրենքի հիման վրա ստեղծված» տրիբունալ (H. v. Belgium, 30/11/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 8950/80):

«Անկախ» տրիբունալ (Campbell and Fell v. the United Kingdom, 28/06/1984 թ. վճիռ, գանգատ թիվ 7819/77, 7878/77, կետ 78–82):

«Անկողմնակալ» տրիբունալ (Piersak v. Belgium, 01/10/1982 թ. վճիռ, գանգատ թիվ 8692/79, կետ 30–32):

Այնտեղ, որտեղ մասնագիտական, կարգապահական կամ գործադիր մարմինը չի համապատասխանում վերոհիշյալ պահանջներին, 6–րդ հոդվածը պահպանված կլինի՝ պայմանով, որ դիմողն այնուհետև ունեցել է լրիվ դատական վերանայման հնարավորություն՝ փաստի և իրավունքի հարցերով (A. Menarini Diagnostics S. R. L v. Italy, 27/09/2011 թ. վճիռ, գանգատ թիվ 43509/08, կետ 57–67):

«Անկողմնակալության», «անկախության» և «օրենքի հիման վրա ստեղծման» պահանջները կիրառելի են միայն դատական մարմինների նկատմամբ:

Ոստիկանությունը կամ դատախազության մարմինները չունեն անկողմնակալ կամ անկախ լինելու կամ օրենքի հիման վրա ստեղծված լինելու կարիք: Այնուամենայնիվ, այնտեղ, որտեղ քրեական արդարադատության համակարգում առկա է հետաքննիչ դատավորի ինստիտուտը, անկողմնակալության պահանջը կարող է կիրառելի լինել տվյալ ինստիտուտի նկատմամբ (Vera Fernandez–Huidobro v. Spain, 06/01/2010 թ. վճիռ, գանգատ թիվ 74181/01, կետ 108–114), այն դեպքում նույնպես, երբ նախագահող դատավորի դատական օժանդակողը de facto դատավարական գործընթացում կարևոր գործառույթներ է իրականացնում, վերջինիս անձնական շահը գործի ելքում կարող է ազդել դատարանի անկողմնակալության վրա (Bellizzi v. Malta, 21/06/2011 թ. վճիռ, գանգատ թիվ 46575/09, կետ 57–62):

«Օրենքի հիման վրա ստեղծված» տրիբունալ

Այս պահանջն առնչվում է այն հարցին, թե արդյոք վեճը լուծող որոշակի կարգապահական կամ վարչական մարմին ունի «տրիբունալի» կամ «դատարանի» բնույթ՝ 6–րդ հոդվածի ինքնավար հասկացության իմաստով, անգամ եթե չի ստացել «դատարան» կամ «տրիբունալ» անվանումը ներպետական համակարգում (H. v. Belgium, 30/11/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 8950/80, կետ 57–62): Սա 6–րդ հոդվածի միակ դրույթն է, որը բացահայտ կերպով հղում է կատարում ներպետական իրավունքին՝ երաշխավորելով Եվրոպական դատարանի կողմից «օրինականության» ստուգման որոշակի մակարդակ: Միևնույն ժամանակ, կա կայուն կանխավարկած, որ ներպետական դատարանները ենթակայության հարցերն ավելի լավ գիտեն, և եթե ենթակայության հարցը պատշաճ քննարկվել է ներպետական մակարդակում, Եվրոպական դատարանը հակված կլինի համաձայնվելու ներպետական դատարանների հետ՝ գործը լսելու իրավասության որոշման հարցում (Khodorkovskiy v. Russia (No. 2), որոշում, 08/11/2011 թ., գանգատ թիվ 11082/06):

Դատողությունների սկզբնահիմքը մարմնի գործառույթն է՝ որոշել իր իրավասության հարցերն իրավունքի գերակայության հիման վրա (Belilos v. Switzerland, 29/04/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10328/83, կետ 62–73): Ինչը նշանակում է գործադիրին բնորոշ անսահմանափակ հայեցողության բացակայություն (Laventis v. Latvia, 28/11/2002 թ. վճիռ, գանգատ թիվ 58442/00, կետ 114–121):

Ըստ Եվրոպական դատարանի՝ պարտադիր չէ, որ մարմինը լինի դատական համակարգի մաս, և այն հանգամանքը, որ այն ունի այլ գործառույթներ՝ բացի դատականը, անհրաժեշտաբար այն չի հանում «տրիբունալ» հասկացության շրջանակներից (H. v. Belgium, 30/11/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 8950/80, կետ 57–62): «Օրենքի հիման վրա ստեղծված» հասկացությունը միտված է ապահովելու, որ դատական կազմակերպությունը կախված չլինի գործադիրի հայեցողությունից, այլ կարգավորված լինի պառլամենտից բխող օրենքով:

Պարտադիր չէ նաև, որ տվյալ մարմնի անդամները լինեն իրավաբաններ կամ որակավորված դատավորներ (Ettl and others v. Austria, 23/04/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 9273/81, կետ 36–41):

Սակայն, ըստ Եվրոպական դատարանի, տվյալ մարմինը պետք է ունենա պարտադիր որոշումներ կայացնելու իշխանություն (Sramek v. Austria, 22/10/1984 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 8790/79, կետ 36–42), այլ ոչ թե միայն առաջարկի խորհուրդներ կամ կարծիքներ, անգամ եթե տվյալ խորհրդին սովորաբար պրակտիկայում հետևում են (Bentham v. the Netherlands, 23/10/1985 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 8848/80, կետ 37–44):

Տրիբունալի իրավասությունը պետք է սահմանվի օրենքով: Պարտադիր չէ, այնուամենայնիվ, որ դատական համակարգի կազմակերպման յուրաքանչյուր տարր կարգավորված լինի օրենքով (Zand v. Austria, որոշում, 12/10/1978 թ., գանգատ թիվ 7360/76): Մինևոյն ժամանակ անթույլատրելի է նաև, որ դատավորի պաշտոնը և դերը կարգավորված լինեն միայն սովորույթով (Pandjigidze and others v. Georgia, 27/10/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 30323/02, կետ 103–111):

«Անկախ» տրիբունալ

Տրիբունալի անկախության հասկացությունը որոշակի առումով համադրվում է առաջին տարրի հետ («օրենքի հիման վրա ստեղծված տրիբունալ»), քանի որ այն ենթադրում է դատական իշխանությունն իշխանության մյուս ճյուղերից, հատկապես գործադիրից առանձնացնելու վարույթային երաշխիքների առկայություն (Clarke v. the United Kingdom, որոշում 25/08/2005 թ., գանգատ թիվ 23695/02): Անկախությունը հաճախ նաև վերլուծվում է «օբյեկտիվ անկողմնակալության» հետ համատեղ, այս երկուսի միջև որևէ հստակ տարբերակում չկա (Moiseyev v. Russia, 09/10/2008 թ. վճիռ, գանգատ թիվ 62936/00, կետ 175–185):

Այնուամենայնիվ, ըստ Եվրոպական դատարանի, գործադիրից կառուցվածքային առանձնացվածության որոշակի աստիճան պահանջվում է: Նախարարը կամ կառավարությունը երբեք չեն կարող դիտարկվել որպես «անկախ» տրիբունալ (Bentham v. the Netherlands, 23/10/1985 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 8848/80):

Եվրոպական դատարանը այս առումով նշել է, որ գործադիրի հնավորությունը՝ փոփոխելու մարմնի որոշումը կամ կասեցնելու դրա կա-

տարումը, գրկում է տվյալ մարմնին «անկախ» տրիբունալ որակից (Van de Hurk v. the Netherlands, 19/04/1994 թ. վճիռ, գանգատ թիվ 16034/90, կետ 45–55):

Մինչդեռ զուտ այն փաստը, որ ընդհանուր իրավասության դատարանի դատավորները նշանակվում են գործադիր իշխանության կողմից կամ ֆինանսավորվում են կառավարության կողմից կարգավորված ընթացակարգերով և ձևով, ինքնին չի նշանակում, որ տվյալ դատավորներն «անկախ» չեն (Clarke v. the United Kingdom, որոշում, 25/08/2005, գանգատ թիվ 23695/02): Հետևաբար, պահանջվում է նշանակման ձևի, պաշտոնավարման ժամկետների և արտաքին ճնշումներից օրենսդրական երաշխիքների ավելի համակողմանի վերլուծություն:

Տրիբունալի անդամներին գործադիրի կողմից պաշտոնավարման ժամկետի ընթացքում պաշտոնից հեռացնելուց ապահովվածությունը վերջիններիս «անկախության» անհրաժեշտ տարր է, սակայն նրանց անփոփոխելիությունը պարտադիր չէ, որ ձևականորեն ամրագրվի օրենքով՝ պայմանով, որ դա փաստացի ճանաչված է (Campbell and Fell v. the United Kingdom, 28/06/1984 թ. վճիռ, գանգատ թիվ 7819/77, 7878/77):

Միաժամանակ, տրիբունալի անդամների պաշտոնավարման որևէ հատուկ ժամկետ չի որոշակիացվել որպես անհրաժեշտ նվազագույն: Համեմատաբար կարճ, սակայն, այնուամենայնիվ, ընդունելի եռամյա ժամկետը բանտի կարգապահական մարմնի գործով հավանաբար նվազագույն սահմանն է (Campbell and Fell v. the United Kingdom, 28/06/1984 թ. վճիռ, գանգատ թիվ 7819/77, 7878/77):

Ըստ Եվրոպական դատարանի՝ համակարգ, որ թույլատրում է խառը դատարան՝ բաղկացած պրոֆեսիոնալ դատավորներից և դատարանին օժանդակողներից, համատեղելի կլինի անկախության պահանջի հետ, քանի դեռ կլինեն դատական օժանդակողների անկախության բավարար երաշխիքներ՝ ներառյալ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումից պաշտպանություն կամ այնպիսի գործեր քննելու սահմանափակումը, որոնք ներառում են կողմեր, որոնք կարող էին դերակատարում ունեցած լինել դատարանին օժանդակողների նշանակմանը (Luka v. Romania, 21/07/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 34197/02, կետ 55–61):

Եվրոպական դատարանը հաճախ է շեշտել անկախության տեսանկյունից անհրաժեշտությունը, այն է՝ արդյոք օբյեկտիվ դիտարկողը ընկալում է մարմինը որպես «անկախ» տրիբունալ (*Belilos v. Switzerland*, 29/04/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10328/83): Տեսանկյունից հարցերը կոնկրետ գործով սովորաբար քննարկվում են օբյեկտիվ «անկողմնակալության» թեստի ներքո (*Daktaras v. Lithuania*, որոշում, 11/01/2000 թ., վճիռ 10/10/2000 թ., գանգատ թիվ 42095/98, կետ 30–38), բայց որոշ բացառիկ դեպքերում դրանք դիտարկվել են «անկախության» տեսանկյունից, այն է՝ երբ վեճը չի լուծվել ընդհանուր իրավասության դատարանի կողմից, այլ մասնագիտացված տրիբունալների կողմից (*Belilos v. Switzerland*, 29/04/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10328/83):

Կոնկրետ գործով կոլեգիայի անդամ դատավորների նշանակման ընթացակարգը նույնպես կարող է անկախության կասկած առաջացնել: Մոիսեևի (*Moiseyev v. Russia*, 09/10/2008 թ. վճիռ, գանգատ թիվ 62936/00, կետ 175–185) գործով Եվրոպական դատարանն արձանագրեց «անկախության» և «անկողմնակալության» պահանջի խախտում, քանի որ դատարանի կազմը փոփոխվել էր (Դատարանի նախագահի որոշմամբ) տասնմեկ անգամ այն դեպքում, երբ միայն երկու դեպքում էր նման փոփոխության պատճառաբանություն ներկայացվել: ԴՄԴ Գրուպ ընդդեմ Սլովակիայի գործով (*DMD Group, a. s. v. Slovakia*, 05/10/2010 թ. վճիռ, գանգատ թիվ 19334/03, կետ 62–72) նույնատիպ իրավիճակ է վերլուծվել «օրենքով ստեղծված» տրիբունալի շրջանակներում:

Ըստ Եվրոպական դատարանի՝ պետական բյուջեից դատարանների ստացվող ֆինանսավորումն ինքնին հիմք չէ դատարանի անկախությունը կասկածի տակ դնելու համար: Միաժամանակ, Եվրոպական դատարանը *Porubova v. Russia*, 2004 թ. գործով դատարանի անկախությունը կասկածի տակ է դրել այն հիմքով, որ պետությունը գործով պատասխանող է, և հնարավոր է գտնել պատճառահետևանքային կապ դատարանի կողմից ստացված ֆինանսավորման և առանձին գործի միջև (*Porubova v. Russia*, 09/12/2004 թ., որոշում 08/10/2009 թ., գանգատ թիվ 8237/03):

Այն դեպքում, երբ դատարանի նախագահի անկախությունն ու ան-

կողմնակալությունը կասկածի տակ են, 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի խախտում չի լինի, եթե դատարանի նախագահն անձամբ չի մասնակցել գործի քննությանը և այլ դատավորների օրենքի կիրառման հատուկ հրահանգներ չի տվել, թեկուզ և հսկել է գործերի բաշխման խիստ կանոնների պահպանմանը և նշանակել զեկուցողներ, ինչպես նաև կարևոր դեր է կատարել գործունեության գնահատման և կարգապահական վարույթում (Parlov–Tkalcic v. Croatia, 22/12/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 24810/06, կետ 81–97):

Եվրոպական դատարանը հատուկ անդրադարձել է առաջին ատյանում դատարանի անկախության «պակասի» խնդրին, ինչի արդյունքում նշել է, որ անգամ եթե բարձր (վերաքննիչ) դատարանն «անկախ» է, դա ինքնին չի կարող փոխհատուցել ստորին ատյանի դատարանի անկախության պակասը՝ բացառությամբ, եթե բարձր դատարանն իր որոշմամբ անդրադարձել է անկախության կոնկրետ խնդրին (Henryk Urban and Ryszard Urban v. Poland, 30/11/2010 թ. վճիռ, գանգատ թիվ 23614/08, կետ 47–56):

Թեմա 2. Անկողմնակալ փրփրունայ

Եթե տրիբունալի «անկախություն» հասկացությունը ներառում է դատական հարցերում իշխանության այլ ճյուղերի միջամտության օրենսդրական և ինստիտուցիոնալ երաշխիքների կառուցվածքային քննություն, «անկողմնակալությունը» առաջացնում է դատարանի անկախության քննություն կոնկրետ գործի կողմերի առումով (Piersak v. Belgium, 01/10/1982 թ., գանգատ թիվ 8692/79): Անգամ մեկ կողմնակալ դատավորի առկայությունը կոլեգիայում կարող է հանգեցնել անկողմնակալության պահանջի խախտման, նույնիսկ եթե չկա մյուս դատավորի (կամ մյուս դատավորների մեծամասնության) անկողմնակալության կասկածի որևէ պատճառ (Sander v. the United Kingdom, § 18–35):

Անկողմնակալությունը կողմնակալության կամ կանխակալության բացակայությունն է կողմերի նկատմամբ: Անկողմնակալության թեստը երկու տեսակի է՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ (Piersak v. Belgium, 01/10/1982 թ., գանգատ թիվ 8692/79):

Սուբյեկտիվ թեստը պահանջում է անձնականացվածության պատ-

ճառահետևանքային կապի ավելի խիստ մակարդակ՝ պահանջելով տրիբունալի որևէ անդամի կողմերից մեկի նկատմամբ անձնական կողմնակալության դրսևորում: Անձնական անկողմնակալությունը կանխավարկած է, քանի դեռ չկա հակառակի ապացույցը (Piersak v. Belgium, 01/10/1982 թ., գանգատ թիվ 8692/79):

Սուբյեկտիվ անկողմնակալության օրինակներ են՝

- գործը քննող դատավորի կողմից արված հրապարակային հայտարարություն, որով գնահատվել են պաշտպանության որակը, ինչպես նաև գործի ելքի հեռանկարները (օրինակ՝ Lavents v. Latvia, 28/11/2002 թ., գանգատ թիվ 58442/00 գործով անմեղության կանխավարկածի խախտում է արձանագրվել), կամ բացասական բնութագրեր են տրվել դիմողին (Olujic v. Croatia, 05/02/2009 թ., գանգատ թիվ 22330/05, կետ 56–68):
- Դիմողի փաստաբանին դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար մեղավոր ճանաչելիս դատավորների կողմից դատական նիստերի դահլիճում արված այն հայտարարությունը, որ վերջիններս «խորապես վիրավորված» են (Kyprianou v. Cyprus, 15/12/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 73797/01, կետ 118–135, որտեղ Եվրոպական դատարանը նաև արձանագրեց, որ անմեղության կանխավարկածի առումով որևէ առանձին խնդիր չի ծագել):
- Դիմողի գործը դատարան ներկայացնելու որոշման մեջ գործն ի պաշտոնե քննող դատավորի կատարած «բավարար ապացույցներ անձի մեղքի վերաբերյալ» ձևակերպումը, երբ տվյալ դատավորն այնուհետև քննել է դիմողի գործը և վերջինիս մեղավոր ճանաչել (Adamkiewicz v. Poland, 02/03/2010 թ., գանգատ թիվ 54729/00, կետ 93–108):

Անկողմնակալության օբյեկտիվ թեստը անձնավորման /պատճառահետևանքային կապի պակաս խիստ անհրաժեշտություն, և, հետևաբար, դիմողի համար ապացուցման ավելի պակաս բեռ է սահմանում: Հետևաբար, կողմնակալության դրսևորումը կամ կողմնակալության բացակայության օրինական կասկածը հասարակ դիտարկողի տեսան-

կյունից արդեն իսկ բավարար է (Piersak v. Belgium, 01/10/1982 թ., գանգատ թիվ 8692/79):

Ի հակադրություն սուբյեկտիվ թեստի՝ օբյեկտիվ անկողմնակալության պակասը առաջացնում է դրական կանխավարկած դիմողի համար, որը կարող է վերացվել պատասխանող պետության կողմից, եթե որևէ օրինական կասկած բացառող բավարար դատավարական երաշխիքներ ներկայացվեն (Salov v. Ukraine, 06/09/2005 թ., գանգատ թիվ 65518/01, կետ 80–86; Farhi v. France, 16/01/2007 թ., գանգատ թիվ 17070/05, կետ 27–32):

Անկողմնակալության օրինական կասկածներ կարող են առաջանալ դատավորի՝ կողմերից մեկի հետ նախկինում աշխատանքային հարաբերություններում գտնված լինելու հետևանքով (Piersak v. Belgium, 01/10/1982 թ., գանգատ թիվ 8692/79), նույն անձի կողմից վարույթի տարբեր փուլերում դատախազական և դատական գործառույթների համադրության հետևանքով (De Cubber v. Belgium, 26/10/1984 թ., գանգատ թիվ 9186/80, կետ 24–30), նույն դատավորների կողմից դատական տարբեր առյաններում մասնակցության փորձի հետևանքով (Salov v. Ukraine, 06/09/2005 թ., գանգատ թիվ 65518/01), դատարանի կազմի մեջ չգտնվող դատավորի կողմից միջամտության (Daktaras v. Lithuania, 11/01/2000 թ. որոշում, 10/10/2000 թ. վճիռ, գանգատ թիվ 42095/98), օրենսդրական/խորհրդատվական և դատական գործառույթների համադրման հետևանքով (Procola v. Luxembourg, 28/09/1995 թ., գանգատ թիվ 14570/89, կետ 41–46), դատավորի և կողմի միջև նախկին ընտանեկան կամ բիզնես հարաբերությունների հետևանքով (Pétur Thór Sigurdsson v. Iceland, վճիռ 10/04/2003 թ., գանգատ թիվ 39731/98, կետ 37–46), ինչպես նաև միևնույն սոցիալական սովորությունների ու սոցիալական գործունեության (ինչպես, օրինակ, կողմի և տրիբունալի անդամի միևնույն կրոնական ծեսերին ու սովորույթներին հարելը) հետևանքով (Holm v. Sweden, 25/11/1993 թ., գանգատ թիվ 14191/88, կետ 30–33):

Այնուամենայնիվ, հստակ պատճառահետևանքային կապ պետք է ցույց տրվի մի կողմից՝ այն հանգամանքի, որը կասկածի տակ է դնում տրիբունալի օբյեկտիվ անկողմնակալությունը և մյուս կողմից՝ գնա-

հատման ենթակա հանգամանքների (Kleyn and others v. the Netherlands, 06/05/2003 թ., գանգատ թիվ 39343/98, 39651/98, 43147/98, 46664/99, կետ 190–202) կամ կոնկրետ գործում ներգրավված անձանց (Pétur Thór Sigurdsson v. Iceland, վճիռ 10/04/2003 թ., գանգատ թիվ 39731/98) միջև: Որպես հետևանք, տրիբունալի անդամի ներգրավվածությունը որևէ հասարակական խմբի կամ կազմակերպությանը, ինչպես, օրինակ, նույն կուսակցությանը կամ կրոնին պատկանելությունը, որին ներգրավված է գործի կողմերից մեկը, օբյեկտիվ թեստի իմաստով բավարար չէ հաստատելու համար կասկածի օրինականությունը:

Ողջամիտ դիտարկողի օրինական կասկածի անձնավորվածության ավելի բարձր մակարդակը երբեմն մշուշում է օբյեկտիվ և սուբյեկտիվ թեստերի միջև կապը (Sander v. the United Kingdom, 09/05/2000 թ., գանգատ թիվ 34129/96, կետ 22–35):

Չնայած հաստատվել է, որ սկզբունքորեն չափազանց թշնամական մամլո արշավը քրեական գործի վերաբերյալ կարող է անբարենպաստ անդրադառնալ դատավարության արդարության և երդվյալ ատենակալների անկողմնակալության վրա (Hauschildt v. Denmark, 24/05/1989 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10486/83, կետ 45–53) և ավելի փոքր չափով՝ պրոֆեսիոնալ դատավորների անկախության վրա (Butkevicius v. Lithuania, որոշում 28/11/2000 թ., գանգատ թիվ 48297/99), սակայն դեռևս այս առումով դատարանների համար պոզիտիվ պարտականության հստակ չափանիշներ չեն մշակվել: Այն դեպքում, երբ նախագահող դատավորը ցուցում է տալիս երդվյալ ատենակալներին անտեսելու մամուլի կողմից իրադարձությունների ներկայացումը և մամուլի կողմից մեղադրվող անձի ձևավորած բնութագիրը, ինչպես նաև արդարությունն ու անմեղության կանխավարկածը հարգելու նախազգուշացումներ է շարունակաբար արձակում մամուլի համար. որևէ խնդիր 6–րդ հոդվածի առումով չի առաջանում (Mustafa kamal Mustafa (Abu Hamza) (No 1) v. the United Kingdom, որոշում, 18/01/2011 թ., գանգատ թիվ 31411/07, կետ 36–40):

Եվրոպական դատարանը նաև նշել է, որ դատավորի կողմից դատավճռից առաջ մեղքի մասին միանշանակ հայտարարության կատարումը սուբյեկտիվ անկողմնակալության տեսանկյունից վկայում է 6–րդ

հողվածի 1-ին պարագրաֆի, ինչպես նաև 6-րդ հողվածի 2-րդ պարագրաֆի առումով անմեղության կանխավարկածի խախտման մասին (Lavents v. Latvia, 28/11/2002 թ., գանգատ թիվ 58442/00; Kyprianou v. Cyprus, 15/12/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 73797/01): Բազմաթիվ գործերում, այնուամենայնիվ, դատավորի հայտարարության արդյունքում 6-րդ հողվածի 2-րդ պարագրաֆի խախտումը առաջնահերթություն կստանա որպես *lex specialis* և 6-րդ հողվածի 1-ին պարագրաֆի խախտման առումով քննարկումը կդարձնի ոչ անհրաժեշտ՝ բացառությամբ, եթե հայտարարությունը չունի մեղքի միանշանակ հայտարարության աստիճան, որի պայմաններում անկողմնակալության քննարկումը պետք է առավել խոր լինի:

Դատավորի կողմից արտահայտված կասկածը, որի բառացի շարադրանքը այնքան ուժեղ չէ, որպեսզի 6-րդ հողվածի 2-րդ պարագրաֆի իմաստով հանգեցնի անմեղության կանխավարկածի խախտման, 6-րդ հողվածի 1-ին պարագրաֆի իմաստով կարող է բավարար լինել, որպեսզի դատավորը օբյեկտիվ առումով որակվի որպես կանխակալ (Hauschildt v. Denmark, 24/05/1989 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10486/83): Նույն մոտեցումն առկա կլինի նաև այն դեպքում, երբ սուբյեկտիվ առումով հայտարարությունն ուղղված է ամբաստանյալի որոշակի անձնական հատկանիշներին և անհրաժեշտ դատավարական պահանջներից ավելին է (Kyprianou v. Cyprus, 15/12/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 73797/01):

ԴԱՍ 4

Թեմա 1. ՄԻԵԿ 6–րդ հոդվածի վարույթային փարրերը: Արդարացի լսումներ (ընդհանուր սկզբունքները), մրցակցության սկզբունքը

«Արդարության» պահանջի գլխավոր տարբերությունը 6–րդ հոդվածի մնացած բոլոր տարրերից այն է, որ այն դիտարկում է վարույթները որպես մեկ ամբողջություն, և այն հարցը, թե արդյոք անձն ունեցել է «արդարացի» դատաքննություն, դիտարկվում է վարույթի բոլոր փուլերի ընդհանրական վերլուծությամբ, այլ ոչ թե մի առանձին միջադեպով կամ վարույթի որևէ փուլի թերությամբ: Որպես այս մոտեցման հետևանք Եվրոպական դատարանը որդեգրել է մոտեցում, համաձայն որի՝ մի մակարդակում թույլ տրված թերությունները կարող են շտկվել հետագա փուլում (*Monnell and Morris v. the United Kingdom*, 02/03/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 9562/81, 9818/82, կետ 55–70):

«Արդարություն» հասկացությունը նույնպես ինքնավար է ներպետական վարույթներում համապատասխան կանոնների խախտման մեկնաբանությունից, որի հետևանքով վարույթային թերությունը (անգամ ակնհայտ խախտումը), որը հանգեցնում է ներպետական վարույթի խախտման, չի կարող ինքնին հանգեցնել «անարդար» դատաքննության (*Gafgen v. Germany*, 01/06/2010 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 22978/05, կետ 162–188), նաև հակառակը՝ 6–րդ հոդվածի խախտումը կարող է արձանագրվել անգամ այն դեպքերում, երբ ներպետական օրենքը պահպանված է:

Մյուս կողմից՝ մի, ավելի շուտ բացառիկ (*Barbera Messegue and Jabardo v. Spain*, 06/12/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10590/83, կետ 67–89) ներպետական վարույթ որակվել է որպես ոչ արդար՝ վարույթային տարաբնույթ թերությունների հավաքական գնահատման պատճառով, չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր թերություն, առանձին վերցրած, Եվրոպական դատարանին չէր համոզել, որ դատաքննությունը եղել է «ոչ արդար»:

Սուբսիդիարության սկզբունքի ուժով 6–րդ հոդվածը հնարավորություն չի տալիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանին գոր-

ծելու որպես չորրորդ ատյանի դատարան, այն է՝ վերահաստատել գործի փաստերը կամ վերաքննել ազգային օրենքի ենթադրյալ խախտումները (Bernard v. France, 23/04/1998 թ. վճիռ, գանգատ թիվ 22885/93, կետ 37–41), ոչ էլ որոշել ապացույցների թույլատրելիության հարցը (Schenk v. Switzerland, 12/07/1988 թ. վճիռ, գանգատ թիվ 10862/84, կետ 45–49): 6–րդ հոդվածը սահմանում է ներպետական դատարանների կողմից հաստատված փաստերի կանխավարկած՝ բացառությամբ, եթե ներպետական վարույթը խախտել է 6–րդ հոդվածի բուն էությունը (Ramanauskas v. Lithuania, Մեծ պալատի վճիռ 05/02/2008 թ., գանգատ թիվ 74420/01, կետ 48–74):

Այս առումով, ըստ Եվրոպական դատարանի ձևավորած ընդհանուր մոտեցման, «Արդարությունը» 6–րդ հոդվածի իմաստով կախված է այն հանգամանքից, թե արդյոք դիմողներն ունեցել են հնարավորություն՝ ներկայացնելու իրենց գործը և վիճարկելու այն ապացույցները, որոնք համարում են կեղծ, այլ ոչ թե՛ արդյոք ներպետական դատարանները կայացրել են ճիշտ կամ սխալ որոշում (Karalevicius v. Lithuania, որոշում (վերջնական), 06/06/2002 թ., գանգատ թիվ 53254/99):

Եվրոպական դատարանի կողմից որդեգրված 6–րդ հոդվածի նպատակային մեկնաբանման կանոնների համաձայն՝ «արդարությունը» քաղաքացիական գործերով⁷ ներառում է հետևյալ պահանջները.

Ա. մրցակցային վարույթ (Rowe and Davis v. the United Kingdom, 16/02/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28901/95),

Բ. զենքերի հավասարություն (Brandstetter v. Austria, 28/08/1991 թ. վճիռ, գանգատ թիվ 11170/84, կետ 41–69),

Գ. ներկայություն (Ekbatani v. Sweden, 26/05/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10563/83, կետ 24–33),

Դ. հրապարակայնություն (Riepan v. Austria, 14/11/2000 թ., գանգատ թիվ 35115/97, կետ 27–41, Galstyan v. Armenia, 15/11/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 26986/03, կետ 77):

⁷ «Արդարությունը» քրեական գործերով ունի որոշակի լրացուցիչ պահանջներ, որոնք սույն դասընթացում չեն քննարկվի:

Մրցակցության սկզբունքը

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով «Մրցակցային» դատավարության պահանջը ենթադրում է ունենալ հնարավորություն իմանալու և մեկնաբանելու դատաքննության ընթացքում մյուս կողմի ներկայացրած դիրքորոշումները կամ ներկայացված ապացույցները: «Մրցակցային» հիմնականում նշանակում է, որ համապատասխան նյութերը կամ ապացույցները հասու են դարձվել երկու կողմերին էլ (Ruiz-Mateos v. Spain, 23/06/1993 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 12952/87): Եվրոպական դատարանի կողմից «մրցակցության» սկզբունքի՝ ավելի շուտ նեղ ընկալումը փոխառնված է Ֆրանսիայի իրավական համակարգից և չի պահանջում ապացույցների ձեռքբերման և ապացույցների ներկայացման ընդհանուր իրավունքի երկրներում գոյություն ունեցող լրիվ մրցակցային համակարգերի ստեղծում:

Չնայած ապացույցների թույլատրելիության կանոնների սահմանումը և ապացույցների գնահատումը ներպետական իրավունքի խնդիրն է, այնուամենայնիվ, ըստ Եվրոպական դատարանի՝ ներպետական դատարանների կողմից թույլատրված ապացույցի բնույթը և եղանակը, որով տվյալ ապացույցը ձեռք է բերվել, 6-րդ հոդվածի վերահսկողության առարկա են (Schenk v. Switzerland, 12/07/1988 թ., գանգատ թիվ 10862/84):

Մրցակցային դատավարության իրավունքից բխող պահանջները սկզբունքորեն քաղաքացիական և քրեական գործերով նույնական են (Werner v. Austria, 24/11/1997 թ. վճիռ, գանգատ թիվ 21835/93, կետ 66):

Միաժամանակ, ըստ Եվրոպական դատարանի, ժամանակ խնայելու և դատավարությունը արագացնելու ցանկությունը չի արդարացնում այնպիսի հիմնարար սկզբունքի անտեսումը, ինչպիսին մրցակցային դատավարության իրավունքն է (Nideröst-Huber v. Switzerland, 18/02/1997 թ. վճիռ, գանգատ թիվ 18990/91, կետ 30):

Եվրոպական դատարանի ձևավորած կայուն մոտեցմամբ մրցակցային դատավարության իրավունքն ունի հետևյալ բովանդակությունը. մրցակցության իրավունքը դա քրեական կամ քաղաքացիական դատավարության կողմերի հնարավորությունն է տեղեկացված լինելու ցանկացած ապացույցի մասին և մեկնաբանելու ներկայացված ցանկացած ապացույց կամ դիտարկում (անգամ ազգային օրենսդրական ծառայու-

թյան անկախ անդամի կողմից ներկայացվածը), որը կարող է ազդել դատարանի որոշման վրա (Ruiz–Mateos v. Spain, 23/06/1993 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 12952/87, կետ 63; McMichael v. the United Kingdom, 24/02/1995 թ. վճիռ, գանգատ թիվ 16424/90, կետ 80; Vermeulen v. Belgium, 20/02/1996 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 19075/91, կետ 33; Lobo Machado v. Portugal, 20/02/1996 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 15764/89, կետ 31; Kress v. France, 07/06/2001 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 39594/98, կետ 74): Այս պահանջը կարող է կիրառվել նաև Սահմանադրական դատարանում (Milatova and others v. the Czech Republic, 21/06/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 61811/00, կետ 63–66; Gaspari v. Slovenia, 21/07/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 21055/03, կետ 53):

Մրցակցային դատավարության սկզբունքը բացարձակ չէ, և դրա սահմանները, կախված կոնկրետ գործի առանձնահատկություններից, կարող են տարբեր լինել (Hudakova and others v. Slovakia, 27/04/2010 թ. վճիռ, գանգատ թիվ 23083/05, կետ 26–27): Մրցակցության սկզբունքը չի պահանջում, որ յուրաքանչյուր կողմ փոխանցի իր հակառակորդին փաստաթղթեր, որոնք անգամ դատարանին ներկայացված չեն եղել (Yvon v. France, 24/04/2003 թ. վճիռ, գանգատ թիվ 44962/98, կետ 38): Նաև չի պահանջում գործի ելքի վրա չազդող հուշագրի կազմում (Asnar v. France (no. 2), 18/10/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 12316/04, կետ 26):

Թեմա 2. «Ձենքերի հավասարություն»

«Ձենքերի հավասարության» սկզբունքը սերտորեն կապված է մրցակցային դատավարության սկզբունքի հետ, և, դատելով Եվրոպական դատարանի մոտեցումներից, կարելի է պնդել, որ այդ երկու սկզբունքները փոխադարձաբար միմյանց լրացնում են: Եվրոպական դատարանի ձևավորած ընդհանուր մոտեցման համաձայն՝ «Ձենքերի հավասարությունը» պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմի ընձեռնվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան չեն դնի նշանակալի ոչ բարենպաստ վիճակում՝ ի համեմատություն մյուս կողմի (Brandstetter v. Austria, 28/08/1991 թ. վճիռ, գանգատ թիվ 11170/84):

«Չենքերի հավասարությունը» գլխավորապես նշանակում է գործը ներկայացնելու հավասար վարույթային հնարավորություններ. այն հաճախ համադրվում է «մրցակցության» պահանջի հետ (Դատարանի՝ ապացույցների հասանելիության և իմացության նեղ ընկալմամբ), և Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքից պարզ չէ՝ արդյոք այս սկզբունքներն իրականում իրարից անկախ գոյություն ունեն (բայց, տե՛ս *Yvon v. France*, 24/04/2003 թ. վճիռ, գանգատ թիվ 44962/98, կետ 29–40):

Որոշ քաղաքացիական գործերով անհարկի չի լինի ապացույցներին հասու լինելու և վիճարկելու հնարավորության հարցը դիտարկել նաև որպես «դատարանի մատչելիության իրավունքի» ընդհանուր պահանջի մաս (*McGinley and Egan v. the United Kingdom*, 09/06/1998 թ. վճիռ, գանգատ թիվ 21825/93, 23414/94): Վառնիմա Քորփորեյշընի գործով, օրինակ (*Varnima Corporation International S. A. v. Greece*, 28/05/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 48906/06, կետ 28–35), ներպետական դատարանները կիրառել էին երկու տարբեր սահմանափակող ժամանակահատվածներ յուրաքանչյուր կողմի համապատասխան հայցապահանջների ներկայացման համար (հայցվոր ընկերության և պետության)՝ չթույլատրելով հայցվոր ընկերության հայցը, թույլատրելով, սակայն, իշխանությունների ներկայացրածը, ինչը Եվրոպական դատարանը համարել է «զենքերի հավասարության» սկզբունքի խախտում:

Ըստ Եվրոպական դատարանի՝ փոքր անհավասարությունը, որը չի ազդում դատաքննության արդարության վրա, չի խախտի 6–րդ հոդվածը (*Verdu Verdu v. Spain*, 15/02/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 43432/02, կետ 23–29): Միևնույն ժամանակ, որպես ընդհանուր կանոն, միայն կողմերի որոշելիքն է՝ արդյոք մյուս կողմի ներկայացրած դիտարկումներն անհրաժեշտ է մեկնաբանել, անկախ նրանից, թե ինչ իրական ազդեցություն կարող էր այն ունենալ դատավորի վրա (*Ferreira Alves v. Portugal* (No. 3), 21/06/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 25053/05, կետ 35–43):

Զնայած որ չկա սպառիչ սահմանում, թե որոնք են «զենքերի հավասարության» նվազագույն չափանիշները, պետք է լինեն համաչափ վարույթային երաշխիքներ՝ համարժեք գործի բնույթին և համապատասխան նրան, թե կողմերի համար ինչ է դրված խաղաքարտին: Դրանք

կարող են ներառել հնարավորություններ՝

ա. ներկայացնել ապացույցներ,

բ. վիճարկել անբարենպաստ ապացույցները,

գ. ներկայացնել փաստարկներ խնդրո առարկա հարցերի վերաբերյալ (H. v. Belgium, 30/11/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 8950/80, կետ 49–55):

Հակառակորդ կողմին չպետք է տրվեն լրացուցիչ արտոնություններ՝ առաջ մղելու իր տեսակետը, ինչպիսին, օրինակ, իրավունքն է ներկա լինել դատարանի առջև այն ժամանակ, երբ մյուս կողմը բացակայում է (Borgers v. Belgium, 30/10/1991 թ. վճիռ, գանգատ թիվ 12005/86, կետ 24–29):

Երկու մասնավոր կողմերի քաղաքացիական վարույթում դատախազի ներկայությունը կարող է արդարացվել, եթե վեճը վերաբերում է նաև հանրային շահին, կամ եթե կողմերից մեկը պատկանում է հասարակական պաշտպանության կարիք ունեցող խոցելի խմբի (Batsanina v. Russia, 26/05/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 3932/02, կետ 20–28):

«Զենքերի հավասարության» սկզբունքն ունի որոշակի ինքնուրույնություն, սակայն ամբողջությամբ անկախ չէ ներպետական օրենսդրությունից, քանի որ 6–րդ հոդվածը հաշվի է առնում մրցակցային համակարգերի (օրինակ՝ այն իմաստով, որ կողմերը պետք է որոշեն՝ այդ համակարգում ինչ ապացույց ներկայացնել կամ ինչ վկա կանչել դատարան) և ի պաշտոնե պարզման համակարգերի (որի պայմաններում դատարանն է որոշում, թե ինչպիսի և ինչ չափի ապացույցներ պետք է ներկայացվեն դատարան) տարբերությունները: Դիմողն ի պաշտոնե պարզման համակարգերում չի կարող, օրինակ, հիմնվելով «զենքերի հավասարության» սկզբունքին կամ 6–րդ հոդվածի 3–րդ պարագրաֆի «դ» կետին, դատարանում վկայություն տալու համար հրավիրել որևէ վկա իր ընտրությամբ (Vidal v. Belgium, 22/04/1992 թ. վճիռ, գանգատ թիվ 12351/86):

«Զենքերի հավասարության» սկզբունքի բովանդակության բացահայտման նպատակով Եվրոպական դատարանը նաև անդրադարձ է կատարել վարույթում փորձագետների մասնակցության խնդրին: Նախադեպային իրավունքը փորձագետների հարցում որոշակիորեն բարդ է, քանի որ մի կողմից՝ նրանք քննվում են սովորական վկաների նման

(Mirilashvili v. Russia, 11/12/2008 թ. վճիռ, գանգատ թիվ 6293/04), մյուս կողմից՝ չեզոքության որոշակի լրացուցիչ պահանջ կարող է ավելացվել փորձագետների նկատմամբ, ովքեր «ավելի էական վարույթային դեր» են կատարում, քան սովորական վկաները (Boenisch v. Austria, 06/05/1985 թ. վճիռ, գանգատ թիվ 8658/79, կետ 28–35; Brandstetter v. Austria, 28/08/1991 թ. վճիռ, գանգատ թիվ 11170/84, կետ 41–69):

Կարելի է հաստատապես նշել, որ որպես կանոն՝ դատարանում վկայություն տալու համար սեփական հայեցողությամբ փորձագետ (այդ թվում՝ նոր կամ այլ) նշանակելու իրավունքը բացակայում է: Ավելին, Եվրոպական դատարանը ավանդաբար նշել է, որ չկա դատարանի կողմից նշանակված մասնագետի (փորձագետի) չեզոքությունը կասկածի տակ դնելու խնդիր, քանի դեռ տվյալ մասնագետը չունի վարույթի որևէ արտոնություն, ինչը նշանակալիորեն անբարենպաստ է դիմողի համար (Brandstetter v. Austria, 28/08/1991 թ., գանգատ թիվ 11170/84):

Պաշտոնական փորձագետների չեզոքության պահանջը, այնուամենայնիվ, ավելի մեծ շեշտադրում է ստացել Եվրոպական դատարանի թարմ նախադեպային իրավունքում, հատկապես այնտեղ, որտեղ փորձագետի եզրակացությունը որոշիչ դեր է կատարում վարույթի համար (Sara Lind Eggertsdottir v. Iceland, 05/07/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 31930/04, կետ 41–55):

Հետաքրքրական է նաև «հակադիր» մասնագետ նշանակելու հարցում Եվրոպական դատարանի դիրքորոշումը: «Հակադիր» մասնագետ նշանակելու իրավունքը, ըստ Եվրոպական դատարանի, կարող է ի հայտ գալ այն դեպքերում, երբ ոստիկանության կողմից նշանակված սկզբնական մասնագետի եզրակացությունը սկիզբ է դնում քրեական հետապնդման, և տվյալ փորձագետի եզրակացությունը դատարանում վիճարկելու այլ ճանապարհ չկա (Stoimenov v. «the former Yugoslav Republic of Macedonia», 05/04/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 17995/02, կետ 38–43):

Կարող են լինել նաև «հակադիր» մասնագետ նշանակելու այլ բացառիկ դեպքեր ևս, օրինակ՝ ապացույցի հանկարծակի և լիակատար փոփոխություն, որը տվել է դատարանի կողմից նշանակված փորձագետը նույն վարույթի շրջանակներում: Այս դեպքում արդարության և պաշտպանական իրավունքի խնդիր կարող է առաջանալ, եթե դատարանը

վկայություն տալու նպատակով մեկ այլ փորձագետ չի հրավիրում (G. B. v. France, 02/10/2001 թ. վճիռ, գանգատ թիվ 44069/98, կետ 56–70):

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քաղաքացիական գործերով իրավաբանական օգնությունը «զենքերի հավասարության» կամ «դատարանի մատչելիության» պահանջներից չի կարող առանձնացվել, որոշ բացառիկ դեպքերում Եվրոպական դատարանը արձանագրել է 6–րդ հոդվածի 1–ին պարագրաֆի խախտում: Օրինակ, երբ քաղաքացիական գործի կարիքավոր մասնակիցներին մերժվել է իրավաբանական օգնության տրամադրումը, որպեսզի վերջիններս զրպարտության մի գործով որպես պատասխանող հանդես գան ընդդեմ ֆինանսական մեծ հնարավորություններ և իրավաբանների մեծ թիվ ունեցող միջազգային կորպորացիայի (Steel and Morris v. the United Kingdom, 15/02/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 68416/01):

Եվրոպական դատարանը կողմերի հավասարության տեսանկյունից խախտում չի արձանագրել այն պայմաններում, երբ դատախազը պետությանը ներկայացրել է քաղաքացիական վարույթում, որում մասնակցում էին մասնավոր դիմողը և պետական ձեռնարկություն հանդիսացող կազմակերպությունը (Batsanina v. Russia, 26/05/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 3932/02):

Խախտում չի արձանագրվել նաև այն դեպքում, երբ դատակոչի ենթակա վկաների ցուցակը ներկայացվել է դատարան դատախազի կողմից, և պաշտպանական կողմը յուրաքանչյուր դեպքում վկա հրավիրելու համար ստիպված էր ստանալ դատարանի թույլտվությունը (Ashot Harutyunyan v. Armenia, 15/06/2010 թ. վճիռ, գանգատ թիվ 34334/04):

Թեմա 1. ՄԻԵԿ 6–րդ հոդվածի վարույթային փարրերը (շարունակություն): Հրապարակային քննություն

Անձնական ներկայություն և հրապարակայնություն

Չնայած այն հանգամանքին, որ «հրապարակային քննության» իրավունքը բխում է 6–րդ հոդվածի բառացի տեքստից, անձնական ներկայությանը և հրապարակայնության խնդրին առնչվող գործերը դիտարկվում են «արդարության» ավելի լայն գաղափարի ներքո (Ekbatani v. Sweden, 26/05/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10563/83): Վերջինս ներառում է 4 իրավունք.

1. Դատարանում հրապարակային քննության և անձնական ներկայության իրավունք քաղաքացիական գործով կողմի կամ քրեական գործով ամբաստանյալի համար:

2. Արդյունավետ մասնակցության իրավունք (T. v. the United Kingdom, 16/12/1999 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 24724/94, կետ 83–89):

3. Հրապարակայնության իրավունք կամ անձի իրավունք՝ պահանջելու, որպեսզի այլ անձի կամ ՋԼՄ–ի թույլատրվի մասնակցել քննությանը (Riepan v. Austria, 14/11/2000 թ. վճիռ, գանգատ թիվ 35115/97):

4. Դատական ակտերի հրապարակման իրավունք (Pretto and others v. Italy, 08/12/1983 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 7984/77, կետ 20–28):

Անձնական ներկայության իրավունքի իրացման տեսանկյունից Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում չկա էական տարբերություն այն իրավիճակի մեջ, երբ միայն փաստաբանն է ներկա, և այն գործերի միջև, որոնք վարվում են գլխավորապես գրավոր ընթացակարգով՝ կողմերի լիակատար բացակայությամբ: Այս իրավունքի էությունն այն է, թե ինչ պայմաններում է 6–րդ հոդվածը երաշխավորում դիմողի համար անձամբ ներկա լինելու իրավունքը: Այդ ներկայությունը ենթադրում է բանավոր քննություն (ի հակադրություն գրավոր վարույթին): Այնուամենայնիվ, ամեն բանավոր քննություն չէ, որ անհրաժեշտաբար պետք է հրապարակային լինի:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով վերաքննիչ ատյանում (կամ առանձին հատուկ վարույթներում) վարույթին անձամբ ներկա լինելու իրավունքին, նշել է, որ անգամ այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարաններն ունեն լրիվ իրավասություն՝ վերանայելու գործն ինչպես փաստի, այնպես էլ իրավունքի տեսանկյունից, 6-րդ հոդվածը միշտ չէ, որ պահանջում է հրապարակային քննություն և ավելին՝ անձամբ ներկա լինելու իրավունք: Յուրաքանչյուր դեպքում պետք է ուշադրություն դարձնել վարույթի առանձնահատկություններին, ըստ որոնց՝ անձի իրավունքները ներկայացվում և պաշտպանվում են՝ հատկապես հաշվի առնելով այն խնդիրները, որոնք վերջինս պետք է որոշի (*Kremzow v. Austria*, 21/09/1993 թ. վճիռ, գանգատ թիվ 12350/86, կետ 58-59):

Ըստ Եվրոպական դատարանի ձևավորած մոտեցման՝ այն դեպքերում, երբ գործը պետք է քննվի միայն մեկ ատյանում, և քննվող հարցը «գլխավորապես տեխնիկական» կամ «բացառապես իրավական» բնույթի չէ, պետք է լինի բանավոր քննություն, և գրավոր վարույթը բավարար չի լինի:

Ի հակադրություն՝ գրավոր վարույթը վերաքննության ընթացքում հիմնականում համատեղելի է համարվում 6-րդ հոդվածի հետ: Բանավոր քննությունը վերաքննության ընթացքում կարող է չպահանջվել, եթե՝

ա. ապացույցների արժանահավատության ոչ մի խնդիր չկա,

բ. գործի փաստերը չեն վիճարկվում,

գ. կողմերը հնարավորություն են ունեցել ներկայացնելու իրենց գործը գրավոր և վիճարկելու դրանց դեմ ներկայացված ապացույցները:

Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանի իրավունքն է որոշել՝ արդյոք վերաքննիչ վարույթը իրոք եղել է «գլխավորապես տեխնիկական», թե «բացառապես իրավական» բնույթի:

Գոյություն ունի միանգամայն ինքնավար պահանջ, որպեսզի կողմը ներկա լինի առնվազն մեկ ատյանում (*Göç v. Turkey*, 11/07/2002 թ. Մեծ պալատի վճիռ, կետ 43-52):

Առաջին ատյանում ներկայության պահանջը մոտ է բացարձակ լինելուն, չնայած Եվրոպական դատարանի կողմից նշվել է, որ «բացառիկ հանգամանքները» կարող են արդարացնել դրա բացակայությունը: Փոքր վարչական բնույթի գործերում (արագության գերազանցում կամ

այլ ճանապարհային զանցանքներ) այնքանով, որքանով չկա անհրաժեշտություն գնահատել ցուցմունքների արժանահավատությունը, Եվրոպական դատարանն ընդունել է, որ բանավոր քննության կարիք չի եղել, և վարույթը կարող է լինել գրավոր:

Կողմերի ֆիզիկական ներկայությունը պահանջվում է այն դեպքերում, երբ.

ա. Անհրաժեշտ է վերջիններից վկայություններ ստանալ այն դեպքերում, երբ վերջիններս գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վկաներ են:

բ. Հնարավորություն տալ դատավորին եզրակացություն կատարելու դիմողի անձնական հատկանիշների, կարողությունների վերաբերյալ և այլն:

Չնայած 6-րդ հոդվածը, որպես այդպիսին, չի երաշխավորում վերաքննության իրավունքը քրեական և քաղաքացիական գործերով, այն վերաբերելի է վերաքննիչ վարույթին ոչ ինքնավար կանոնի ուժով. այն է, երբ դիմողի ներկայությունը վերաքննիչ ատյանում երաշխավորված է ներպետական օրենսդրությամբ: Արդյո՞ք դիմողի ներկայությունը վերաքննիչ վարույթում անհրաժեշտ է: Դա կախված է՝

ա. վարույթի բնույթից և վերաքննիչ դատարանի դերից,

բ. այն հանգամանքից, թե ինչ է դրված խաղաքարտին դիմողի համար:

Վերաքննիչ դատարանում ներկայությունը կպահանջվի այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը քննում է ինչպես իրավունքի, այնպես էլ փաստի հարցեր, և եթե վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանելու կամ փոփոխելու ստորադաս ատյանի ակտը (Ekbatani v. Sweden, 26/05/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10563/83):

Վերաքննիչ դատարանում ներկայությունը պարտադիր է նաև այն դեպքերում, երբ դիմողը ռիսկի է դիմում այն հիմքով, որ իր վիճակը լրջորեն վատթարացել է վերաքննիչ ատյանում, անգամ եթե վերաքննիչ դատարանը քննում է միայն իրավունքի հարցեր (Kremzow v. Austria, 21/09/1993 թ. վճիռ, գանգատ թիվ 12350/86, կետ 58–59), կամ այն դեպքերում, երբ, օրինակ, դիմողի անձնական հատկանիշները կամ առողջական վիճակը ուղղակիորեն կազդեն վերաքննիչ դատարանի

իրավական կարծիքի ձևավորմանը (Salomonsson v. Sweden, 12/11/2002 թ. վճիռ):

Արդյունավետ մասնակցություն

Քաղաքացիական գործով կողմը կամ քրեական գործով ամբաստանյալը պետք է հնարավորություն ունենա մասնակցելու իր ֆիզիկական, մտավոր կարգավիճակի, տարիքի և այլ անձնական առանձնահատկությունների հաշվառմամբ կազմակերպված դատաքննությանը (Stanford v. the United Kingdom, 23/02/1994 թ., գանգատ թիվ 16757/90): Միաժամանակ, հիշյալ գործով Եվրոպական դատարանը, նշելով ընդհանուր մոտեցումը, 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի խախտում չի արձանագրել՝ հաշվի առնելով, որ լսողական խնդիրներ ունեցող անձը գործը քննող դատարանին չի հայտնել իր այդ խնդիրների մասին և չի պահանջել հատուկ միջոցներ:

Քննության հրապարակային բնույթը՝ երրորդ անձանց և ՁԼՄ-ների մասնակցությունը

Այս կանոնի նպատակն է պաշտպանել քաղաքացիական գործով կողմերին և ամբաստանյալներին արդարադատության գաղտնի իրականացումից և ապահովել արդարադատության առավել տեսանելիություն՝ ապահովելով հասարակության վստահությունը դատական համակարգի նկատմամբ:

Այս դրույթի օգնությամբ մամուլը կարող է իրականացնել հասարակական վերահսկողության իր գործառույթը, որը երաշխավորված է նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածով:

Հրապարակային քննությունը բացառապես հարաբերական իրավունք է, քանի որ 6-րդ հոդվածի առաջին պարբերության ձևակերպումը նշում է տվյալ իրավունքից բացառություններ: Սակայն կանխավարկածը միշտ պետք է լինի հրապարակային քննության օգտին, իսկ բացառությունը պետք է խստորեն պահանջվի գործի հանգամանքներով՝ խիստ անհրաժեշտության թեստ (Campbell and Fell v. the United King-

dom, 28/06/1984 թ. վճիռ, գանգատ թիվ 7819/77, 7878/77, կետ 86–92):

Գործի՝ բացառապես «տեխնիկական» բնույթ ունենալը հրապարակայնությունը բացառելու բավարար պատճառ չէ:

Ընտանեկան գործերով, մասնավորապես երեխաների մասնակցությամբ, կարևոր է, որպեսզի կողմերը և վկաները ի վիճակի լինեն ազատորեն արտահայտվելու խիստ անձնական հարցերի վերաբերյալ առանց վախենալու հանրային հետաքրքրությունից կամ մեկնաբանությունից:

Առաջին ատյանում հրապարակայնության բացակայությունը չի կարող փոխհատուցվել՝ վերաքննությունը հրապարակային դարձնելով՝ բացառությամբ, եթե վերաքննիչ դատարանն ունի գործն ամբողջ ծավալով վերանայելու իրավունք: Միևնույն ժամանակ բացակայում է վերաքննության հրապարակայնության իրավունքը, եթե առաջին ատյանում քննությունը հրապարակային է եղել՝ բացառությամբ, եթե վերաքննությունը իրականացվում է ամբողջ ծավալով, և որևէ սահմանափակում չի նախատեսվում իրավունքի հարցերով (Axen v. Germany, 08/12/1983 թ. վճիռ, գանգատ թիվ 8273/78):

Որոշման հրապարակայնությունը

Դատական նիստի ընթացքում ամբողջությամբ իր վճիռը ընթերցելու դատարանի պարտականություն գոյություն չունի. միայն եզրափակիչ մասի հրապարակումը բավարար է: Դատական ակտը ուսումնասիրության համար պետք է հասու դարձվի (Pretto and others v. Italy, 08/12/1983 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 7984/77):

Թեմա 2. Վարույթի տևողությունը (ողջամիտ ժամկետի սկզբունք)

Այս իրավունքը բխում է ինչպես 6–րդ հոդվածի բառացի ձևակերպումից, այնպես էլ արդարադատության արդյունավետության սկզբունքից (H. v. France, 24/10/1989 թ. վճիռ, գանգատ թիվ 10073/82):

Կոնվենցիայի 6–րդ հոդվածն ամբողջապես անկախ է ներպետական վարույթի ժամկետից, և որպես հետևանք՝ ներպետական ժամկետների խախտումը պարտադիր չէ, որ հանգեցնի 6–րդ հոդվածի խախտման: Ի տարբերություն բազմաթիվ ազգային համակարգերի՝ Եվրոպական

դատարանի նախադեպային իրավունքով գոյություն չունեն որոշակի ժամկետային սահմանափակումներ որևէ առանձին վարույթի համար, և բոլոր իրավիճակները գնահատվում են գործ առ գործ սկզբունքով:

Երկարատև գործերն այն առաջին ոլորտն է եղել, որտեղ Եվրոպական դատարանը կայացրել է առաջին վճիռները՝ անդրադառնալով ոչ թե կոնկրետ գործի հանգամանքներին, այլ համապատասխան պետությունում պարբերական բնույթ կրող խախտումներին (Kudla v. Poland, 26/10/2000 թ. վճիռ, գանգատ թիվ 30210/96, կետ 119–131):

Պետության համար պոզիտիվ պարտականություն է ծագում Կոնվենցիայի 13–րդ հոդվածի ուժով ստեղծելու միջոցներ՝ արագացնելու վարույթը՝ 6–րդ հոդվածի նպատակներից ելնելով (Kudla v. Poland, 26/10/2000 թ. վճիռ, գանգատ թիվ 30210/96):

Ժամկետի սկիզբը, որը հաշվի է առնվում «ողջամիտ ժամկետի» իմաստով, որոշվում է այն ամսաթվով, երբ համապատասխան հայցը ներկայացվել է՝ բացառությամբ, եթե դիմողը օրենքով գրկված է եղել այդ հնարավորությունից՝ որոշակի նախադատական վարչական պարտադիր վարույթ անցնելու պահանջով: Տվյալ դեպքում ողջամիտ ժամկետի հոսքը սկսվում է առաջին մերժումն արտահայտվելու պահից (Konig v. Germany, 28/06/1978 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 6232/73, կետ 97–111):

«Ողջամիտ ժամկետի» սկզբունքի իմաստով ժամկետի ավարտը ներպետական վերջնական դատական ակտի մասին տեղեկացման պահն է՝ առանց կատարողական վարույթի ժամանակահատվածի (Burdov v. Russia (No. 2), 15/01/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 33509/04), բայց ներառյալ սահմանադրական վերանայման վարույթն այն դեպքերում, երբ դա ուղղակի ազդեցություն կարող է ունենալ վեճի ելքի վրա (Buchholz v. Germany, 06/05/1981 թ. վճիռ, գանգատ թիվ 7759/77, կետ 46–63): Եվրոպական դատարանը, սկսած 1980–ականներից, փոխել է իր սկզբնական մոտեցումը, երբ տվյալ ժամկետում հաշվի էր առնվում նաև կատարողական փուլը (Martins Moreira v. Portugal, 26/10/1990 թ. վճիռ, գանգատ թիվ 11371/85, կետ 44): Դատական ակտի կատարման ուշացումը ներկայումս դիտարկվում է որպես առանձին խնդիր՝ դատարանի իրավունքի բաղադրատարր կազմող՝ դատական ակտի ժամա-

նակին կատարման իրավունքի հնարավոր խախտում:

Այն դեպքերում, երբ գործը փակվել է, այնուհետև վերաբացվել (օրինակ՝ հսկողական վերանայման նպատակով), այն ողջ ժամանակահատվածը, երբ որևէ վարույթ չի իրականացվել, պետք է բացառել հաշվարկից (*Skorobogatova v. Russia*, 01/12/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 33914/02, կետ 37–42):

Եվրոպական դատարանի կողմից մշակված արդեն կայուն իրավաբանության համաձայն՝ այն, թե արդյոք ժամկետը «ողջամիտ» է, գնահատվում է հետևյալ երեք չափանիշները ներառող թեստի միջոցով (*Pretto and others v. Italy*, 08/12/1983 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 7984/77, կետ 30–37)։

- գործի բնույթն ու բարդությունը,
- դիմողի (վարույթի կողմերի) վարքը (գործողությունները),
- պետական մարմինների գործողությունները:

Չնայած, որ գոյություն չունի 6–րդ հոդվածով թույլատրված ժամկետի որոշման ուղեցույց, այն առաջնահերթ կախված է ներգրավված դատական ատյանների քանակից: Որպես կանոն՝ Եվրոպական դատարանն ավելի մեծ ուշադրությամբ է քննում այն գործերը, որոնցում գործը նույն ատյանում քննվել է երեք տարուց երկար (*Guincho v. Portugal*, 10/07/1984 թ. վճիռ, գանգատ թիվ 8990/80, կետ 29–41), 5 տարի՝ երկու ատյանում և 6 տարի՝ երեք ատյանում:

«Ողջամիտ ժամկետի» գնահատումը մեծապես կախված է գործի հանգամանքներից: Ամենակարճ ժամանակահատվածը, որի համար Եվրոպական դատարանը փաստել է ողջամիտ ժամկետի սկզբունքի խախտում, եղել է 2 տարի 4 ամիսը՝ երկու ատյաններում ՁԻԱՀ–ով վարակված անձին փոխհատուցում վճարելու գործով (*X. v. France*, 31/03/1992 թ. վճիռ, գանգատ թիվ 18020/91)։ այն դեպքում, երբ ամենաերկար ժամանակահատվածը, որի պայմաններում Եվրոպական դատարանը չի արձանագրի խախտում, երկու ատյաններում կարող է կազմել մինչև 8 տարի:

Որպես օրինակ, վերաքննիչ դատարանում 4 տարի տևողությամբ գործի քննության ժամկետը Եվրոպական դատարանը գնահատել է

որպես «Ողջամիտ ժամկետի» խախտում՝ առանց առավել խոր վերլուծության անհրաժեշտություն տեսնելու (Capuano v. Italy, 25/06/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 9381/81):

Գործի բնույթն ու բարդությունը

Եվրոպական դատարանը հաշվի է առնում, թե ինչ է դրված խաղաքարտին դիմողի համար ազգային վարույթում: Հատուկ ուշադրության են արժանի գործերը, որտեղ գործի բնույթն ինքնին պահանջում է վարույթի արագություն.

– երեխայի խնամակալության վարույթը (H. v. the United Kingdom, 08/07/1987 թ., գանգատ թիվ 9580/81),

– ՁԻԱՀ-ով վարակված անձի փոխհատուցման պահանջը (X. v. France, 31/03/1992 թ. վճիռ, գանգատ թիվ 18020/91),

– ճանապարհային պատահարի ժամանակ ստացած լուրջ վնասվածքի հայց (Martins Moreira v. Portugal, 26/10/1990 թ. վճիռ, գանգատ թիվ 11371/85):

Հակառակը, գործի բարդությունը հնարավորություն է տալիս պետական մարմիններին վարույթի երկարատևությունն արդարացնելու: Գործի բարդությունն առաջնահերթ վերաբերում է փաստերի քանակին, որոնք պետք է հաստատվեն գործով, օր՝ գործ, որում մասնակցում են մեծ քանակով պատասխանողներ (Meilus v. Lithuania, 06/11/2003 թ. վճիռ, գանգատ թիվ 53161/99, կետ 25): Հարկերից խուսափելու, ընկերությունների միջոցով կատարված խարդախությունները, փողերի լվացման գործերը և նմանատիպ այլ գործեր հաճախ բարդ են, բայց եթե ընթացող վարույթը զրկում է ընկերությանը նորմալ գործելու հնարավորությունից, այս դեպքում պահանջվում է պետական մարմինների հատուկ ուշադրություն (De Clerk v. Belgium, 25/09/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 34316/02, կետ 53–73):

Իրավական բարդությունը, ինչպես, օրինակ, ներպետական նախադեպային իրավունքի անորոշությունն է, այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կիրառել թարմ օրենսդրություն, նույնպես կարող է արդարացնել

երկարաձգումը (Pretto and others v. Italy, 08/12/1983 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 7984/77, կետ 30–37):

Կողմերի վարքը

Եվրոպական դատարանը հաշվի է առնում միայն այն հետաձգումները (հաճախ անվանվում են «անգործության էական ժամանակահատվածներ»), որոնք վերագրելի են պետական մարմիններին: Հետաձգումները, որոնք վերագրելի են դիմողին, անկախ նրանից դիտավորյալ են, թե ոչ, հաշվի չեն առնվում «ողջամիտ ժամկետը» գնահատելիս (H. v. the United Kingdom, 08/07/1987 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 9580/81): Միևնույն ժամանակ, կառավարությունը չի կարող արդարացնել վարույթի ողջ տևողությունը՝ վկայակոչելով դիմողի վերաքննիչ բողոքները, միջնորդությունները, դիմումները և այլն, մինչև այն աստիճան, քանի դեռ տվյալ դատավարական քայլերը իրավունքը չարաշահող բնույթ չեն կրել: Վարույթի կողմերը չեն կարող մեղադրվել իրենց շահերի պաշտպանության համար ներպետական օրենսդրությամբ տրամադրած միջոցների և գործիքների հնարավորություններից լիովին օգտվելու համար (Kolomityets v. Russia, 22/02/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 76835/01, կետ 25–31):

Ողջամիտ ժամկետի սկզբունքի պահպանման նպատակով ողջամիտ ջանք պետք է պահանջվի պետական մարմիններից յուրաքանչյուր դատավարական փուլում (Baraona v. Portugal, 08/07/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 10092/82, կետ 46–57):

Այն դեպքերում, երբ քաղաքացիական գործերով հետաձգումն առաջացել է մեկ այլ մասնավոր կողմի պատճառով, ներպետական դատարանը պետք է քայլեր ձեռնարկի արագացնելու վարույթը և ոչ թե ընդլայնի ժամկետային սահմանները կողմի հարմարավետության համար՝ առանց պատշաճ պատճառի (Guincho v. Portugal, 10/07/1984 թ. վճիռ, գանգատ թիվ 8990/80):

Եվրոպական դատարանն անդրադարձել է նաև գործի կասեցմանը ողջամիտ ժամկետի սկզբունքը գնահատելիս: Եվրոպական դատարանի ընդհանուր մոտեցումն այն է, որ գործի կասեցումը տվյալ գործի հետ

կապված մեկ այլ գործի ելքին սպասելու նպատակով կամ ակտի սահմանադրականությունը որոշելու համար սկզբունքորեն ընդունելի է այն պայմանով, որ թույլատրվել է հնարավոր նվազագույն հետաձգում:

Անգամ պաշտպանական իրավունքներն ապահովելու շահ հետապնդելու դեպքում (ինչպես, օրինակ, պաշտպանական կողմի վկաներին ծանուցելու անհրաժեշտության դեպքում) պետական մարմինները կարող են խախտել «ողջամիտ ժամկետի» պահանջը, եթե տվյալ պարտականությունը չկատարեն պատշաճ ջանքով (*Kuvikas v. Lithuania*, 27/06/2005 թ. վճիռ, գանգատ թիվ 21837/02, կետ 50):

Ընդհանուր հետաձգումները՝ պայմանավորված դատարանի ծանուրաբեռնվածությամբ, կարող են ընդունելի լինել, քանի դեռ դրանք չեն երկարաձգվում, և պետական մարմինների կողմից ողջամիտ միջոցներ են ձեռնարկվում նախապատվություն տալու գործերին՝ կախված հրատապությունից և կարևորությունից (*Zimmerman and Steiner v. Switzerland*, 13/07/1983 թ. վճիռ, գանգատ թիվ 8737/79, կետ 27–32):

Միևնույն ժամանակ պայմանավորվող պետությունները Կոնվենցիայի 1–ին հոդվածի ուժով պարտավոր են կազմակերպել իրենց իրավական համակարգերն այնպես, որպեսզի ապահովեն դրանց համապատասխանությունը 6–րդ հոդվածի պահանջներին, և ոչ մի հղում ֆինանսական կամ պրակտիկ դժվարություններին չի կարող արդարացնել վարույթի չափազանց երկարատևության համակարգային խնդիրը (*Salesi v. Italy*, 26/02/1993 թ. վճիռ, գանգատ թիվ 13023/87, կետ 20–25):

Այն դեպքերում, երբ գործը շարունակաբար վերաբացվում է կամ փոխանցվում է մի դատարանից մյուսին, Եվրոպական դատարանը այդ հանգամանքը հակված է դիտարկել որպես իրավիճակը լրջորեն ծանրացնող հանգամանք, որի արդյունքում խախտում կարող է արձանագրվել, անգամ եթե վարույթի ընդհանուր տևողությունը չափազանց երկար չի թվում (*Svetlana Orlova v. Russia*, 30/07/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 4487/04, կետ 42–52):

Տեսական գրականություն

1. Protecting the right to a fair trial under the European Convention on Human Rights, Council of Europe, Strasbourg, 2012, pp 51–55.
2. Guide on article 6, Right to a Fair trial (civil limb), Council of Europe/ European Court of Human Rights, 2013, pp 46–55.
3. Right to a fair trial under the European convention on human rights (Article 6), interights 2009, pp 39–44.

ՄԻԵԴ դատական ակտեր

1. A. Menarini Diagnostics S. R. L v. Italy, 27/09/2011 թ. գանգատ թիվ 43509/08.
2. Adamkiewicz v. Poland, 02/03/2010 թ., գանգատ թիվ 54729/00.
3. Airey v. Ireland, 09/10/1979 թ., գանգատ թիվ 6289/73.
4. Al-Adsani v. the United Kingdom, 21/11/2001 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 35763/97.
5. Albert and Le Compte v. Belgium, 10/02/1983 թ. գանգատ թիվ 7299/75, 7496/76.
6. Ashingdane v. the United Kingdom, 28/05/1985 թ. գանգատ թիվ 8225/78.
7. Ashot Harutyunyan v. Armenia, 15/06/2010 թ. գանգատ թիվ 34334/04.
8. Asnar v. France (no. 2), 18/10/2007 թ., գանգատ թիվ 12316/04.
9. Baraona v. Portugal, 08/07/1987 թ. գանգատ թիվ 10092/82.
10. Barbera Messegue and Jabardo v. Spain, 06/12/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10590/83.
11. Batsanina v. Russia, 26/05/2009 թ., գանգատ թիվ 3932/02.
12. Belilos v. Switzerland, 29/04/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10328/83.
13. Bellizzi v. Malta, 21/06/2011 թ., գանգատ թիվ 46575/09.

14. *Benthem v. the Netherlands*, 23/10/1985 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 8848/80.
15. *Bernard v. France*, 23/04/1998 թ., գանգատ թիվ 22885/93.
16. *Bobrova v. Russia*, 17/11/2005 թ., գանգատ թիվ 24654/03.
17. *Boenisch v. Austria*, 06/05/1985 թ., գանգատ թիվ 8658/79.
18. *Borgers v. Belgium*, 30/10/1991 թ., գանգատ թիվ 12005/86.
19. *Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Sirketi v. Ireland*, 30/06/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 45036/98.
20. *Bracci v. Italy*, 13/10/2005 թ., գանգատ թիվ 36822/02.
21. *Brandstetter v. Austria*, 28/08/1991թ., գանգատ թիվ 11170/84.
22. *Brumarescu v. Romania*, 28/10/1999 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28342/95.
23. *Buchholz v. Germany*, 06/05/1981 թ., գանգատ թիվ 7759/77.
24. *Burdov v. Russia (No.2)*, 15/01/2009 թ., գանգատ թիվ 33509/04.
25. *Butkevicius v. Lithuania*, 28/11/2000 թ., վճիռ 26/03/2002 թ., գանգատ թիվ 48297/99.
26. *Capuano v. Italy*, 25/06/1987 թ., գանգատ թիվ 9381/81.
27. *Chevrol v. France*, 13/02/2003 թ., գանգատ թիվ 49636/99.
28. *Clarke v. the United Kingdom*, 25/08/2005 թ. որոշում, գանգատ թիվ 23695/02.
29. *Collectif national d'information et d'opposition a' l'usine Melox-Collectif stop et Melox v. France*, 12/06/2007 թ., գանգատ թիվ 75218/01.
30. *Daktaras v. Lithuania*, 11/01/2000 թ. որոշում, 10/10/2000 թ. վճիռ, գանգատ թիվ 42095/98.
31. *Dattel (No. 2) v. Luxembourg*, 30/07/2009 թ., գանգատ թիվ 18522/06.
32. *De Clerk v. Belgium*, 25.9.2007 թ., գանգատ թիվ 34316/02.
33. *De Cubber v. Belgium*, 26/10/1984 թ., գանգատ թիվ 9186/80.
34. *Delcourt v. Belgium*, 17/01/1970 թ., գանգատ թիվ 2689/65.
35. *Demir and Baykara v. Turkey*, 12/11/2008 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 34503/97.
36. *Deumeland v. Germany*, 29/05/1986 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 9384/81.

37. Deweer v. Belgium, 27/02/1979 թ., գանգատ թիվ 6903/75.
38. DMD Group, a. s. v. Slovakia, 05/10/2010 թ., գանգատ թիվ 19334/03.
39. Ekbatani v. Sweden, 26/05/1988 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 10563/83.
40. Engel and others v. The Neterlands, 08/06/1976թ., գանգատ թիվ 5100/71, 5101/71, 5102/71, 5354/72, 5370/72.
41. Ettl and others v. Austria, 23/04/1987 թ., գանգատ թիվ 9273/81.
42. Fadeyeva v. Russia, 09/06/2005 թ., գանգատ թիվ 55723/00.
43. Farhi v. France, 16/01/2007 թ., գանգատ թիվ 17070/05.
44. Ferreira Alves (No. 3) v. Portugal, 21/06/2007 թ., գանգատ թիվ 25053/05.
45. Fogarty v. the United Kingdom, 21/11/2001 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 37112/97.
46. Foucher v. France, 18/03/1997 թ., գանգատ թիվ 22209/93.
47. Fuklev v. Ukraine, 07/06/2005 թ., գանգատ թիվ 71186/01.
48. G. B. v. France, 02/10/2001 թ., գանգատ թիվ 44069/98.
49. Gafgen v. Germany, 01/06/2010 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 22978/05.
50. Galstyan v. Armenia, 15/11/2007թ., գանգատ թիվ 26986/03.
51. Ganci v. Italy, 30/10/2003 թ., գանգատ թիվ 41576/98.
52. Gaspari v. Slovenia, 21/07/2009 թ., գանգատ թիվ 21055/03.
53. Georgiadis v. Greece, 29/05/1997 թ., գանգատ թիվ 21522/93.
54. Golder v. The United Kingdom, 21/02/1975 թ., գանգատ թիվ 4451/70.
55. Gorou (No 2) v. Greece, 20/03/2006 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 12686/03.
56. Granger v. the United Kingdom, 28/03/1990 թ., գանգատ թիվ 11932/86.
57. Guincho v. Portugal, 10/07/1984 թ., գանգատ թիվ 8990/80.
58. H. v. Belgium, 30/11/1987 թ., գանգատ թիվ 8950/80.
59. H. v. France, 24/10/1989 թ., գանգատ թիվ 10073/82.
60. H. v. the United Kingdom, 08/07/1987 թ. Մեծ պալատի վճիռ,

զանգատ թիվ 9580/81.

61. *Hatton v. the United Kingdom*, 08/07/2003 թ. Մեծ պալատի վճիռ, զանգատ թիվ 36022/97.

62. *Hadjianastassiou v. Greece*, 16/12/1992 թ., զանգատ թիվ 12945/87.

63. *Hauschildt v. Denmark*, 24/05/1989 թ. Մեծ պալատի վճիռ, զանգատ թիվ 10486/83.

64. *Henryk Urban and Ryszard Urban v. Poland*, 30/11/2010 թ., զանգատ թիվ 23614/08.

65. *Holm v. Sweden*, 25/11/1993 թ., զանգատ թիվ 14191/88.

66. *Hornsby v. Greece* 19/03/1997 թ., զանգատ թիվ 18357/91.

67. *Hudakova and others v. Slovakia*, 27/04/2010 թ., զանգատ թիվ 23083/05.

68. *Jankauskas v. Lithuania*, որոշում, 16/12/2003 թ., զանգատ թիվ 59304/00.

69. *Jodko v. Lithuania*, dec., 07/09/1999 թ., զանգատ թիվ 39350/98.

70. *Karalevicius v. Lithuania*, որոշում (վերջնական), 06/06/2002 թ., զանգատ թիվ 53254/99.

71. *Kari-Pekka Pietilainen v. Finland*, 22/09/2009 թ., զանգատ թիվ 13566/06.

72. *Khan v. The United Kingdom*, 12/05/2000 թ., զանգատ թիվ 35394/97.

73. *Khodorkovskiy (No.2) v. Russia*, որոշում, 08/11/2011 թ., զանգատ թիվ 11082/06.

74. *Kleyn and others v. the Netherlands*, 06/05/2003 թ., զանգատ թիվ 39343/98, 39651/98, 43147/98, 46664/99.

75. *Kohlhofer and Minarik v. The Czech Republic*, 15/10/2009 թ., զանգատ թիվ 32921/03, 28464/04, 5344/05.

76. *Kress v. France*, 07/06/2001 թ. Մեծ պալատի վճիռ, զանգատ թիվ 39594/98.

77. *Konig v. Germany*, 28/06/1978 թ. Մեծ պալատի վճիռ, զանգատ թիվ 6232/73.

78. *Kolomityets v. Russia*, 22/02/2007 թ., զանգատ թիվ 76835/01.

79. *Kreuz v. Poland*, 19/06/2001 թ., զանգատ թիվ 28249/95.

80. Kudla v. Poland, 26/10/2000 թ., գանգատ թիվ 30210/96.
81. Kulikowski v. Poland, 19/05/2009 թ., գանգատ թիվ 18353/03.
82. Kuvikas v. Lithuania, 27/06/2005 թ., գանգատ թիվ 21837/02.
83. Kyprianou v. Cyprus, 15/12/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 73797/01.
84. Lavents v. Latvia, 28/11/2002 թ., գանգատ թիվ 58442/00.
85. Le Compte, Van Leuven and De Meyere v. Belgium, 23/06/1981 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 6878/75, 7238/75.
86. Lobo Machado v. Portugal, 20/02/1996 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 15764/89.
87. Luka v. Romania, 21/07/2009 թ., գանգատ թիվ 34197/02.
88. Maggio and othets v. Italy, 31/05/2011 թ., գանգատ թիվ 46286/09, 52851/08, 53727/08, 54486/08, 56001/08.
89. Marckx v. Belgium, 13/06/1979 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 6833/74.
90. Martins Moreira v. Portugal, 26/10/1990 թ., գանգատ թիվ 11371/85.
91. McMichael v. the United Kingdom, 24/02/1995 թ., գանգատ թիվ 16424/90.
92. McGinley and Egan v. the United Kingdom, 09/06/1998 թ., գանգատ թիվ 21825/93 , 23414/94.
93. Meilus v. Lithuania, 06/11/2003 թ., գանգատ թիվ 53161/99.
94. Menet v. France, 14/06/2005 թ., գանգատ թիվ 39553/02:
95. Milatova and others v. the Czech Republic, 21/06/2005 թ., գանգատ թիվ 61811/00.
96. Mihova v. Italy, որոշում, 30/03/2010 թ., գանգատ թիվ 25000/07.
97. Mirilashvili v. Russia, 11/12/2008 թ., գանգատ թիվ 6293/04.
98. Moiseyev v. Russia, 09/10/2008 թ., գանգատ թիվ 62936/00.
99. Monnell and Morris v. the United Kingdom, 02/03/1987 թ., գանգատ թիվ 9562/81, 9818/82.
100. Mustafa kamal Mustafa (Abu Hamza) (No 1) v. the United Kingdom, որոշում, 18/01/2011 թ., գանգատ թիվ 31411/07.
101. Nideröst-Huber v. Switzerland, 18/02/1997 թ., գանգատ թիվ 18990/91.

102. Olujic v. Croatia, 05/02/2009 թ., գանգատ թիվ 22330/05.

103. Osman v. the United Kingdom, 28/10/1998 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 23452/94.

104. Pandjigidze and others v. Georgia, 27/10/2009 թ., գանգատ թիվ 30323/02.

105. Panjeheighalehei v. Denmark, որոշում, 13/10/2009 թ., գանգատ թիվ 11230/07.

106. Paul and Audrey Edwards v. the United Kingdom, 14/03/2002 թ., գանգատ թիվ 46477/99.

107. Parlov–Tkalčić v. Croatia, 22/12/2009 թ., գանգատ թիվ 24810/06.

108. Pellegrin v. France, 08/12/1999 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28541/95.

109. Pétur Thór Sigurdsson v. Iceland, 14/06/2001 թ. որոշում, 10/04 /2003 թ. վճիռ, գանգատ թիվ 39731/98.

110. Piersak v. Belgium, 01/10/1982 թ. որոշում, գանգատ թիվ 8692/79.

111. Porubova v. Russia, 08/10/2009 թ. վճիռ, 09/12/2004 թ. որոշում, գանգատ թիվ 8237/03.

112. Pretto and others v. Italy, 08/12/1983 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 7984/77.

113. Procola v. Luxembourg, 28/09/1995 թ., գանգատ թիվ 14570/89.

114. Pullar v. the United Kingdom, որոշում, 20/05/1996 թ., գանգատ թիվ 22399/93.

115. Ramanauskas v. Lithuania, 26/04/2005 թ. որոշում, 05/02/2008 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 74420/01.

116. Riepan v. Austria, 14/11/2000 թ., գանգատ թիվ 35115/97.

117. Ringeisen v. Austria, 16/07/1971 թ., գանգատ թիվ 2614/65.

118. Roche v the United Kingdom, 19/05/2005 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 32555/96.

119. Rowe and Davis v. the United Kingdom, 16/02/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28901/95.

120. Ruiz–Mateos v. Spain, 23/06/1993 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 12952/87.

121. Ryabykh v. Russia, 24/07/2003 թ., գանգատ թիվ 52854/99.

122. Nejdet Şahin and Perihan Şahin v. Turkey, 20/10/2011 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 13279/05.
123. Sander v. the United Kingdom, 09/05/2000 թ., գանգատ թիվ 34129/96.
124. Sakhnovskiy v. Russia, 02/11/2010 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 21272/03.
125. Salesi v. Italy, 26/02/1993 թ., գանգատ թիվ 13023/87.
126. Salov v. Ukraine, 06/09/2005 թ., գանգատ թիվ 65518/01.
127. Sara Lind Eggertsdottir v. Iceland, 05/07/2007 թ., գանգատ թիվ 31930/04.
128. Schenk v. Switzerland, 12/07/1988 թ., գանգատ թիվ 10862/84.
129. Schreiber and Boetsch v. France, 11/12/2003 թ., որոշում, գանգատ թիվ 58751/00.
130. SCM Scanner de l'Ouest Lyonnais and others v, France, 21/06/2007 թ., գանգատ թիվ 12106/03.
131. Sejdovic v. Italy, 01/03/2006 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 56581/00.
132. Skorobogatova v. Russia, 01/12/2005 թ., գանգատ թիվ 33914/02.
133. Sramek v. Austria, 22/10/1984 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 8790/79.
134. Staroszczyk v Poland, 22/03/2007 թ., գանգատ թիվ 59519/00.
135. Steel and Morris v. the United Kingdom, 15/02/2005 թ., գանգատ թիվ 68416/01.
136. Stoimenov v. «the former Yugoslav Republic of Macedonia», 05/04/2007 թ., գանգատ թիվ 17995/02.
137. Svetlana Orlova v. Russia, 30/07/2009 թ., գանգատ թիվ 4487/04.
138. Talat Tunc v. Turkey, 27/03/2007 թ., գանգատ թիվ 32432/96.
139. T. v. the United Kingdom, 16/12/1999 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 24724/94.
140. Tinnelly& Sons Ltd and Others and McElduff and Others v. the United Kingdom, 10/07/1998 թ., գանգատ թիվ 20390/92, 21322/92.
141. Tudor Tudor v. Romania, 24/03/2009 թ., գանգատ թիվ 21911/03.
142. Vacher v. France, 17/12/1996 թ., գանգատ թիվ 20368/92.

143. Van de Hurk v. the Netherlands, 19/04/1994 թ., գանգատ թիվ 16034/90.
144. Varnima Corporation International S. A. v. Greece 28/05/2009 թ., գանգատ թիվ 48906/06.
145. Vera Fernandez–Huidobro v. Spain, 06/01/2010 թ., գանգատ թիվ 74181/01.
146. Verdu Verdu v. Spain, 15/02/2007 թ., գանգատ թիվ 43432/02.
147. Vermeulen v. Belgium, 20/02/1996 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 19075/91.
148. Vidalv. Belgium, 22/04/1992 թ., գանգատ թիվ 12351/86.
149. Vilho Eskelinen and others v. Finland, 19/04/2007 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 63235/00.:
150. Webb v, the United Kingdom, որոշում, 02/07/1997 թ., գանգատ թիվ 31006/96.
151. Werner v. Austria, 24/11/1997 թ., գանգատ թիվ 21835/93.
152. X. v. France, 31/03/1992 թ., գանգատ թիվ 18020/91.
153. Yvon v. France, 24/04/2003 թ., գանգատ թիվ 44962/98.
154. Zand v. Austria, որոշում, 12/10/1978 թ., գանգատ թիվ 7360/76.
155. Z. And others v. The United Kingdom, 10/05/2001 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 29392/95.
156. Zimmerman and Steiner v. Switzerland, 13/07/1983 թ., գանգատ թիվ 8737/79.
157. Zivulinskas v. Lithuania, որոշում, 12/12/2006 թ., գանգատ թիվ 34096/02.
158. Zylkov v. Russia, 21/06/2011 թ., գանգատ թիվ 5613/04.

ԴԱՍ 1

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Ա.–ն և Կ.–ն եղել են գրանցված ամուսնական հարաբերությունների մեջ, համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երեխա, ինչպես նաև ձեռք են բերել գույք: Ընտանեկան անախորժությունների պատճառով որոշել են ամուսնալուծվել՝ համատեղ դիմում ներկայացնելով ՔԿԱԳ մարմնին: Ամուսնալուծության ժամանակ որոշել են, որ ընդհանուր համատեղ գույքի ճակատագիրը որոշելու են, ինչպես նաև ամուսնությունից ծագած բոլոր հարցերը կարգավորելու են պայմանագրով:

Ամուսինների միջև կնքված նոտարական վավերացմամբ պայմանագրով նախատեսվել է, որ համատեղ ամուսնությունից ծնված երեխան պետք է բնակվի մոր հետ, իսկ հայրը յուրաքանչյուր ամիս պետք է վճարի որոշակի գումար՝ որպես ալիմենտ:

Կնքված պայմանագրով նաև սահմանել են դրույթ, համաձայն որի՝ ամուսիններից որևէ մեկը մյուսի նկատմամբ որևէ պահանջ երբևէ չի ներկայացնելու:

Պայմանագրի կնքումից որոշ ժամանակ անց ամուսինը դադարել է ալիմենտ վճարելուց, ինչպես նաև հայց է ներկայացրել դատարան՝ խնդրելով իր երեխայի հետ տեսակցության կարգ սահմանել:

Կինը նույնպես դիմել է դատարան՝ խնդրելով ամուսնուց հոգուտ իրեն բռնազանձել ալիմենտի որոշակի գումար, ինչպես նաև դատարանից պահանջել է պարտավորեցնել ամուսնուն՝ իրեն և իրենց համատեղ երեխային ամուսնուն սեփականության իրավունքով պատկանող բնակարանում ապրելու իրավունք տրամադրել:

Հարցեր

1. Արդյո՞ք փվյալ դեպքում ամուսինների կնքած պայմանագրի՝ միմյանց նկատմամբ երբևէ որևէ պահանջ չներկայացնելու մասին դրույթը կարող է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով համարվել դատարանի իրավունքից հրաժարում:

2. Ամուսիններից յուրաքանչյուրի՝ մյուսի դեմ ներկայացված պահանջը բավարարող է արդյո՞ք Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի

իմաստով «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ» վեճ հասկացության չափանիշներին (վերլուծել յուրաքանչյուր պահանջն առանձին):

ԴԱՍ 2

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Ա.–ն դիմել է հանրային պաշտպանի գրասենյակին, որպեսզի իրեն քաղաքապետարանի դեմ ներկայացվելիք գործով պետական միջոցների հաշվին փաստաբան տրամադրվի: Տրամադրված փաստաբանը, ներկայացնելով հայցը քաղաքապետարանի դեմ, շահում է գործը, իր վստահորդի հետ կնքվում է շահավետ հաշտության համաձայնություն, որով քաղաքապետարանը պարտավորվում է երեք տարվա ընթացքում տրամադրել բնակարան, հակառակ դեպքում՝ վճարել 20.000.000 ՀՀ դրամ: Տվյալ հաշտության համաձայնությունը հաստատվում է, վճիռը չի բողոքարկվում և օրինական ուժ է ստանում:

Հաշտության համաձայնությամբ սահմանված եռամյա ժամկետը լրանալուց հետո հայցվորի փաստաբանը դիմում է դատարան, ստանում կատարողական թերթ, այնուհետև դիմում ԴԱՀԿ ծառայություն՝ խնդրելով կատարել դատական ակտը: Ծառայությունը վերադարձնում է ներկայացված կատարողական թերթը այն պատճառաբանությամբ, որ հարկադիր կատարման օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը լրացել է, և տվյալ ժամկետը հարգելի ճանաչելու դատարանի որոշում չի ներկայացվել: Այնինչ, ըստ կնքված հաշտության համաձայնության, փոխհատուցումը պետք է վճարվեր հաշտության համաձայնությունը հաստատվելուց երեք տարի հետո, երբ օբյեկտիվորեն տվյալ եռամյա ժամկետը լրացած կլիներ:

Միաժամանակ, համայնքի ավագանին դիմում է վերաքննիչ դատարան՝ խնդրելով բեկանել հաշտության համաձայնությունը հաստատող վճիռն այն պատճառաբանությամբ, որ վճիռն անդրադառնում է ավագանու իրավունքներին, այն է՝ համայնքի տարեկան բյուջեն, այդ թվում՝ ծախսային մասը հաստատելն ավագանու իրավասությունն է, հետևաբար տվյալ դատական ակտի կատարումը կստեղծի մի իրավիճակ, երբ հա-

մայնքը կկատարի ավագանու կողմից հավանության չարժանացած ծախս:

Վերաքննիչ դատարանը բեկանում է բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկում նոր քննության:

Փաստաբանը վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու իր վստահորդի խնդրանքը մերժում է՝ բանավոր պատճառաբանելով, որ վերաքննիչ դատարանը, ըստ էության, ճիշտ որոշում է կայացրել, և այն բողոքարկելն անիմաստ է, քանի որ Վճռաբեկ դատարանն ամենայն հավանականությամբ վճռաբեկ բողոքը կվերադարձնի:

Հարցեր

1. Արդյո՞ք տվյալ դեպքում պետության միջոցների հաշվին տրված փաստաբանի գործողությունները, այն է՝ համայնքի ավագանուն երրորդ անձ չներգրավելը, կատարողական թերթն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը, վճռաբեկ բողոք բերելուց հրաժարվելը կարող են դիտվել որպես դատարանի մատչելիության իրավունքի պրակտիկ խոչընդոտ՝ պարզաճ իրավական օգնության բացակայության ձևով:

2. Արդյո՞ք տվյալ դեպքում առկա է վերջնական դատական իրավունքի չվերանայման իրավունքի խախտում:

3. Արդյո՞ք տվյալ դեպքում առկա է վերջնական դատական ակտի պարզաճ կատարման իրավունքի խախտում:

ԴԱՍ 3

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

ՀՀ-ում ստեղծվում է տնտեսական գործունեությունից բխող վեճեր քննող դատարան: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխության միջոցով սահմանվում են այն գործերը, որոնք ենթակա են տվյալ դատարանում քննության: Օրենքի փոփոխությունը մտնում է օրինական ուժի մեջ:

Երևանի վարչական շրջանների դատարաններից մեկում քննվող և նոր ստեղծված դատարանին ընդդատյա գործերից մեկով կողմերը համատեղ դիմում են ներկայացնում տվյալ դատարանի նախագահին՝ խնդրելով շարունակել գործը քննել վարչական շրջանի ընդհանուր

իրավասության դատարանում՝ հաշվի առնելով, որ նոր ստեղծված դատարանում գործի քննությունը պետք է սկսվի նորից, ինչը ժամանակատար և ծախսատար է:

Վարչական շրջանի դատարանի նախագահը, հաշվի առնելով արդարադատության արդյունավետության, ինչպես նաև ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքները, բավարարում է դիմումը և հանձնարարում գործը քննող դատավորին շարունակելու գործի քննությունը: Գործի քննությունը շարունակվում է, և ներկայացված հայցը բավարարվում է:

Պատասխանող կողմը ներկայացնում է վերաքննիչ բողոք, որով, ի թիվս նյութական իրավունքի նորմերի, վկայակոչում է նաև դատավարական իրավունքի նորմերի խախտում, այդ թվում՝

– դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այն է՝ տվյալ գործը պետք է քննել տնտեսական վեճեր քննող (մասնագիտացված) դատարանի դատավորը, այնինչ քննել է ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, որն այդ պահին գործող օրենքով տվյալ գործը քննելու իրավունք չունի,

– դատավորն իր հորեղբայրն է, ուստի պետք է ինքնաբացարկ հայտնած լինել:

Հարցեր

1. Արդյո՞ք գործը կոնկրետ դատարանում քննելու երկկողմ ստորագրված դիմումի առկայության պարագայում կարելի է արձանագրել «օրենքով սահմանված դատարանի» իրավունքի խախտում:

Կփոխվե՞ր իրավիճակը, եթե նման դիմում ներկայացվելու դեպքում գործի քննությունը նույն դատարանում շարունակելու հնարավորությունը նախատեսված լիներ օրենքով:

Արդյո՞ք տվյալ դեպքում դատարանի նախագահի գործողություններում առկա է անկախ դատարանի իրավունքի խախտում:

2. Արդյո՞ք տվյալ դեպքում «անկողմնակալ դատարանի» իրավունքի տեսանկյունից կարող է խախտում արձանագրվել այն պայմաններում, եթե դատավորը անձի՝ մինչև 3-րդ աստիճանի ազգականն է, սակայն վեճը, ըստ էության, լուծել է ի վնաս վերջինիս:

ԴԱՍ 4

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

«Երևան քաղաքի վարչական շրջանի առաջին աստանի դատարանում քննվում է քաղաքացիական գործ: Ներկայացված հայցին պատասխանողը հայցադիմումը ստանալուց ավելի քան մեկ ամիս հետո նշանակված առաջին դատական նիստին ներկայացնում է հայցադիմումի պատասխան, որում շարադրում է հայցի դեմ առարկելու իր դատողությունները, ինչպես նաև դրանց հիմնավորումները և կից ապացույցներ: Դատավորը դատական նիստի ընթացքում բանավոր հայտարարությամբ արձանագրում է, որ պատասխանը ներկայացվել է օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետի լրանալուց հետո, ուստի այն ընդունվել չի կարող:

Գործի քննությամբ կայացված վճռով հայցը բավարարվում է: Միաժամանակ, վճռում դատավորը նշում է, որ չի անդրադառնում պատասխանողի ներկայացրած փաստարկներին և վճռում նույնպես դրանք չի շարադրում, քանի որ ներկայացվել են օրենքով նախատեսված ժամկետի խախտմամբ:

Պատասխանողը ներկայացնում է վերաքննիչ բողոք, որում, ի թիվս այլ փաստարկների, նշում է, որ խախտվել է մրցակցային դատավարության իրավունքի սկզբունքը: Հայցվոր կողմը ներկայացնում է վերաքննիչ բողոքի պատասխան, որում հերքում է վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկները: Բողոք ներկայացրած անձը, ցանկանալով վերաքննիչ դատարանին ներկայացնել վերաքննիչ բողոքի պատասխանի վերաբերյալ իր դիրքորոշումները, ներկայացնում է «Առարկություններ վերաքննիչ բողոքի պատասխանի դեմ» վերնագրված փաստաթուղթ, որում շարադրում է իր հակափաստարկները բողոքի պատասխանի փաստարկների վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանն իր կայացրած որոշմամբ չի անդրադառնում նշված փաստարկներին՝ պատճառաբանելով, որ վերաքննիչ վարույթում օրենքով թույլատրվում են ներկայացնել միայն վերաքննիչ բողոք և վերաքննիչ բողոքի պատասխան: Իսկ որևէ այլ դատավարական փաստաթուղթ ներկայացնելու իրավունք նախատեսված չէ, հետևաբար նշված փաստաթղթով ներկայացված փաստարկները քննարկվել չեն կարող:

Հարցեր

1. Արդյո՞ք առաջին արյանում գործի քննության ժամանակ պատասխանի փաստարկներին չանդրադառնալը խախտել է կողմի՝ «զենքերի հավասարության» իրավունքը:

2. Արդյո՞ք վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ պատասխանի փաստարկներին չանդրադառնալը խախտել է կողմի՝ «զենքերի հավասարության» իրավունքը:

ԴԱՍ 5

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Ա.–ն և Կ.–ն, ապրելով համատեղ, 20.08.2011 թ. ունեցել են երեխա: Ա.–ն ընդունել է երեխայի հայրությունը՝ ՔԿԱԳ մարմնին համապատասխան դիմում ներկայացնելով: Սկսելով ապրել առանձին՝ վերջիններիս մեջ վեճ է ծագել երեխայի տեսակցության կարգի վերաբերյալ, ինչի լուծման համար էլ Ա.–ն դիմել է Երևան քաղաքի վարչական շրջանի դատարան՝ խնդրելով սահմանել իր երեխայի հետ տեսակցության կարգ:

Գործը դատարանում մուտքագրվելուց մոտ մեկ տարի հետո լրանում է Կ.–ի պարտադիր ժամկետային ծառայության տարկետման իրավունքը, և վերջինս զորակոչվում է ՀՀ զինված ուժեր: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105–րդ հոդվածի առաջին մասի 2–րդ կետի հիմքով քաղաքացիական գործի վարույթը կասեցվում է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի քննության համար պարտադիր է պատասխանողի ներկայությունը, քանի որ երեխայի հետ տեսակցության հաճախականության քննարկման համար անհրաժեշտ է ուսումնասիրել անձի անձնական հատկանիշները՝ պարզելու համար երեխայի վրա հնարավոր դրական կամ բացասական ազդեցությունը:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորակոչվելուց հետո հայցվորը դիմում է ներկայացնում դատարան՝ խնդրելով վերսկսել իր գործի քննությունը, քանի որ վերացել են գործը կասեցնելու հիմքերը: Դատարանը վերսկսում է գործի քննությունը՝ միաժամանակ վարույթ ընդունելով պատասխանողի հակընդդեմ հայցը՝ հայցվորին

ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ: Դատարանը միաժամանակ որոշում է կայացնում դատական նիստերն անցկացնել դռնփակ՝ հաշվի առնելով, որ քննարկվելու են անձանց ընտանեկան կյանքի հարցեր: Կայացված վճռով դատարանը սահմանում է շաբաթական մեկ անգամ կես ժամով տեսակցելու իրավունք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական շրջանի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ հոր հետ երկարատև չչփվելու արդյունքում երեխան օտարվել է հորից, չի ճանաչում վերջինիս, հոր հետ շփվելիս մշտապես տագնապի մեջ է:

Դժգոհ մնալով դատարանի կայացրած վճռից՝ հայցվորն այն բողոքարկում է վերաքննիչ դատարան՝ միաժամանակ խնդրելով փաստել, որ խախտվել է գործը ողջամիտ ժամկետում քննելու իր իրավունքը, քանի որ իր՝ ժամկետային ծառայության մեջ գտնվելու հանգամանքը հիմք չէր գործը կասեցնելու համար:

Հարցեր

1. Արդյո՞ք Կրկյալ դեպքում կարող է առկա լինել «ողջամիտ ժամկետի սկզբունքի» խախտում դատարանի կողմից:
2. Արդյո՞ք դատական նիստերը դռնփակ անցկացնելու որոշումը կարող է խախտել «հրապարակային» քննության կոնվենցիոն պահանջը:

Հունան Տեր-Վարդանյան

ՄԻԵԴ

**ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՅՈՒԹ

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Հեռապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am